

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԻ
ԵՎ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(Համառոտ ուրվագիծ)**

ԵՐԵՎԱՆ-2021

ՀՏԴ 330

ԳՄԴ 65

Տ 776

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տ.գ.դ., պրոֆեսոր
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տ 776 Տնտեսական հրաշքների և նորոգությունների
գործարկման ուղիները Հայաստանում (համառոտ
ուրվագիծ).- Եր.: ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ, 2021.- 138 էջ:

Գրքույկը իրենում ներառում է նշված երկրների տնտեսա-
կան հրաշքների և տնտեսական նորոգությունների փորձը, որո-
շարկված Հայաստանի առանձնահատկություններով և դրանով
նաև հոդվածագիրները տեսնում են իրենց մասնակցությունը
հանրապետության տնտեսության հիմնախնդիրների արդյունա-
վետ լուծումներում: Գրքույկում ներառված երկրների ուրվա-
գծերի հանգամանալից վերլուծությունները տրված են «Տնտե-
սական հրաշքներ», գործարկման ուղիները Հայաստանում (Եր.,
2020) և «Տնտեսական նորոգություններ» գործարկման ուղիները
Հայաստանում (Եր., 2021) ժողովածուներում: Գրքույկը օգտա-
կար և ուսանելի կարող է լինել Հայաստանի գործադիր և օրեն-
սդիր իշխանություններին իրենց ծանր, ստեղծագործ, հեղափո-
խական փոփոխություններին ու բարեփոխումներին միտված
գործունեության մեջ: Այն օգտակար և ուսանելի կարող է լինել
նաև բուհերի դասախոսների, գիտաշխատողների, պետական
կառավարման աշխատողների, հայցորդների, ասպիրանտների,
դոկտորանտների ու ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 330

ԳՄԴ 65

ISBN 978-9939-9260-6-3

© ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ելույթներ.....	6
Ներածական խոսք	
(Վլադիմիր Հարությունյան)	6
2. Զեկուցումներ	
Ավստրալիա	
(Հայկ Մարկոսյան).....	13
Ավստրիա	
(Մարիամ Պողոսյան)	18
Արգենտինա	
(Մերի Մուրադյան).....	21
Բրազիլիա	
(Մերի Մանուչարյան)	24
Գերմանիա	
(Ռոբերտ Սարիկյան)	27
Թայվան	
(Լիլիթ Սարգսյան)	32
Էստոնիա	
(Ռազմիկ Իսահակյան)	38
Իսլանդիա	
(Գայանե Թովմասյան)	41
Իսպանիա	
(Գևորգ Հարությունյան)	44

Իսրայել	
(Մերի Մանուչարյան)	48
Իրան	
(Տաթևիկ Շահինյան).....	53
Լատվիա	
(Գոհար Ոսկանյան).....	57
Կանադա	
(Գոհար Ոսկանյան).....	61
Կիպրոս	
(Արմինե Զախարյան)	65
Հարավային Կորեա	
(Արմինե Զախարյան).....	69
Հնդկաստան	
(Գրիգոր Մանուկյան)	72
Հունաստան	
(Արմինե Զախարյան).....	76
Ճապոնիա	
(Սվետլանա Դալլաքյան).....	80
Մալայզիա	
(Քրիստինե Բադդասարյան).....	84
Նորվեգիա	
(Ստեփան Պապիկյան)	88
Նոր Զելանդիա	
(Եվգենյա Հակոբյան)	92
Շվեդիա	
(Ատոմ Մարգարյան)	95

Շվեյցարիա	
(Եվգենյա Հակոբյան)	98
Չեխիա	
(Դոնարա Գրիգորյան).....	102
Չիլի	
(Շոդեր Պողոսյան)	106
Ռումինիա	
(Գրիգոր Մանուկյան)	111
Սինգապուր	
(Լիլիթ Սարգսյան)	115
Վրաստան	
(Վահագն Խաչատուրյան)	120
Ֆիլիպիններ	
(Աննա Մակարյան)	125
Ֆինլանդիա	
(Թաթուլ Մկրտչյան)	128
Ֆրանսիա	
(Հովհաննես Ասատրյան).....	131
3. Մեր հեղինակները	135

1. ԵԼՈՒՅԹՆԵՐ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտն իր գիտակազմակերպչական գործունեության վերջին 1,5 տասնամյակի ընթացքում պարբերաբար կիրառական առաջարկություններ է ներկայացրել հանրապետության կառավարություններին, որոնք հասցեագրվել են վարչապետներին կամ պատկան մարմինների ղեկավարներին: Դրանք 2021 թվականին ամփոփվել և հրապարակվել են ստորև բերվող գրքերի ձևաչափով.

1. ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կողմից ՀՀ Կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկությունները 2007-2017թթ., Եր.: ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2021թ. մաս 1.-332 էջ:

2. ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կողմից ՀՀ Կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկությունները 2018-2020թթ., Եր.: ՀՀ ԳԱԱ Մ.Քո-

թանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2021թ. մաս 2.-284 էջ:

3. ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Հարությունյանի կողմից ՀՀ Կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկությունները 2008-2020թթ. (ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2021թ. 248 էջ):

Ի դեպ, վերոնշյալ կիրառական առաջարկություններից երկուսը՝ «Հարկային քաղաքականության կատարելագործումը պարզեցված հարկի մասին» և «Հարկային քաղաքականության կատարելագործումը հաստատագրված վճարների մասով» ՀՀ կառավարությունը 2008թ. քարձրացվել են օրենսդրական մակարդակի և 2009 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվել նշված երկու հարկային օրենքները: Կիրառական առաջարկությունների մի մասն էլ իրենց արտացոլում են ստացել ենթաօրենսդրական ակտերում:

Կիրառական առաարկությունների ստվար ցանկ է ներառված ստորև բերվող հետազոտություններում. Ավագյան Հ.Ս., Լեոնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հա-

յաստանի Հանրապետությունում (Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 326 էջ), ՀՀ արժեթղթերի առաջնային շուկան զարգացնելու հիմնախնդիրներ (2009 թ.), Հայաստանի Հանրապետության մրցակցային միջավայրը բարելավելու ուղիներ (2009 թ.), Հայաստանի Հանրապետության գիտելիքահենք տնտեսություն կառուցելու հայեցակարգային մոտեցումներ (2009 թ.), Փոքր և միջին ձեռնարկատիրությունը զարգացնելու հարկային և վարկային խթանները (2009 թ.), ՀՀ ազգային նորամուծական համակարգ ձևավորելու և զարգացնելու հիմնախնդիրներ (2009 թ.), Գիտական և գիտատեխնիկական գործունեությունը բարելավելու տնտեսական ուղիները (2009 թ.), Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը զարգացնելու հայեցակարգային ուղղությունները (2009 թ.), Ընդերքի հարստությունների փոշիացումը կանխելու ուղիները (2011 թ.), ՀՀ լեռնային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց բնապահպանական հետևանքները գնահատելու վերաբերյալ (2010 թ., 2014 թ.), ՀՀ տնտեսության հայ-թուրքական սահմանը բացելու առնչվող հավանական տնտեսական ռիսկերը (2010 թ.), ՀՀ քաղցրահամ ջրերի ռեսուրսները, պաշարները և կենցաղում ու գյուղատնտեսության մեջ

դրանք արդյունավետ օգտագործելու հիմնախնդիրներ (2011 թ.), ՀՀ տնտեսության ստվերային հատվածը կրճատելու ուղիները (2011 թ.), Հայաստանի Հանրապետության պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանք լուծելու ուղիները (2012 թ.), Ագրարային ոլորտի բարելավման ուղիները (2012 թ.), Բնական ցեոլիտներ կիրառելու հիմնախնդիրները (2012 թ.), ՀՀ տնտեսական կայուն աճ ապահովելու հիմնախնդիրները և լուծման ուղիները (2017 թ.), Ներքին և օտարերկրյա ներդրումային ակտիվությունը խրախուսելը որպես ՀՀ կայուն տնտեսական աճ ապահովելու գործիք (2017 թ.), Հարկային վարչարարությունը և հարկային բեռը բարելավելու հիմնախնդիրները կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու (2017 թ.), Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանելու հիմնախնդիրները (2017 թ.), Ռազմաարդյունաբերության, նորարարությունների և տեսական աճի փոխկապվածությունները փոքր բաց տնտեսություններում (2017 թ.) և այլն:

Սակայն կառավարությունները Տնտեսագիտության ինստիտուտի վերոնշյալ կիրառական առաջարկություններն անուշադրության են մատնել, որոնք չեն կորցրել իրենց արդիական-

նությունը և կարող են օգտակար լինել ՀՀ գործող իշխանություններին տարբեր ստորաբաժանումների ռազմավարական խնդիրները լուծելիս:

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը (ՏԻ) ձեռնարկել է նոր նախաձեռնություն և ծրագրել է «Տնտեսական հրաշքները և տնտեսական նորոգությունները աշխարհում». գործարկման ուղիները Հայաստանում խորագրով 2021թ. IV եռամսյակում գիտաժողով կազմակերպել նպատակ ունենալով նպաստ բերել Հայաստանի տնտեսության արագատեմպ զարգացմանը: Սակայն Covid-19-ի անցանկալի զարգացումների հետ կապված այն տեղի չի ունենա: Ուստի որոշեցինք տնտեսագիտության ինստիտուտի 2-3 տարվա գիտահետազոտական աշխատանքի խիստ հակիրճ արդյունքները հանրապետության պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց հասու դարձնել սույն ձևաչափով: Նկատել, որ ռեֆորմների ժամանակ չի կարելի առաջնորդվել «շուկայի պայմաններին հարմարվելու» նեղահայաց փիլիսոփայությամբ: Գիտական արդյունքը, որը սույն ձևաչափով ներկայացվում է Ձեզ, միայն նյութականորեն չափելի արդյունք չէ, որ ակնկալենք ստանալ եռամսյակով, կիսամյակով կամ տարվա կտրվածքով: Գիտական արդյունքը բացառիկ և յուրահատուկ

ապրանք է, որն իր սպառողական արժեքը պահպանում է տասնյակ տարիներ և, բնականաբար, դրա արդյունքաստեղծ գործընթացն էլ երկարատև է, և սովորական ապրանքի նման չպետք է շուկայականացնել¹, որի պայմաններում գիտությունը կոադարի գիտություն լինելուց և կմահանա:

Մի քանի նկատառում աշխատության առանձնահատկությունների մասին.

- ելակետ ունենալով տնտեսության արագ-ընթաց աճ ապահոված երկրների կուտակած համաշխարհային փորձը, աշխատությունը օգտակար կարող է լինել հանրապետության օրենսդիր ու գործադիր մարմինների տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների (նախարարություններ, հանձնաժողովներ և այլ միավորներ) տնտեսության տարբեր ոլորտների հիմնախնդիրների լուծումների ժամանակ, ինչպես նաև գիտության ոլորտի աշխատողներին (գիտաշխատողներ, ասպիրանտներ, դասախոսներ, հայցորդներ), իրականացնելու նոր ուսումնասիրություններ:

- աշխատության մեջ ներառված երկրների

¹ Ազգային տնտեսություն ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետազոծը (2007-2017), եզրակացություններ, կիրառական առաջարկություններ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 249:

ուրվագծերի հանգամանալից վերլուծությունները տրված են՝ ««Տնտեսական հրաշքներ». գործարկման ուղիները Հայաստանում» (Եր., 2020) և ««Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում» (Եր., 2021) ժողովածուներում:

- Նշված ժողովածուների ամբողջ նյութը, այդ թվում՝ հոդվածների ամփոփագրերը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով տեղադրված են ինստիտուտի կայքում և հասանելի են բոլորին:

Ինստիտուտի կոլեկտիվը համաշխարհային փորձի սկզբունքների մեջ, որոշարկված Հայաստանի առանձնահատկություններով տեսնում է իր մասնակցությունը հանրապետության տնտեսության հիմնախնդիրների արդյունավետ լուծումներում:

*Վլադիմիր Հարությունյան
Ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր պրոֆեսոր*

2. ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

ԱՎՍՏՐԱԼԻԱ

Հայկ Մարկոսյան

Ավստրալիայի 20-րդ դարի զարգացումը ոգեշնչված է քեյնսական գաղափարախոսությամբ, որի շարժիչ ուժերն են միգրացիան, պրոտեկցիոնիզմն ու աշխատավարձերի կենտրոնացված կարգավորումը: Իրերի նման դրվածքի պայմաններում ձևավորվել է բարգավաճող մի տնտեսություն, որտեղ աշխատավոր ժողովուրդն ապրում է կյանքի անսովոր բարձր մակարդակի պայմաններում¹:

Հետպատերազմյան 25 տարիների ընթացքում պետական կարգավորման մոդելը շոշափելի արդյունքներ տվեց, ընդհուպ մինչև 1970-ական թվականները: Սակայն տեղի ունեցած համաշխարհային զարգացումները կասեցրին ավստրալիական տնտեսության հաղթարշավը: Այլևս ակնհայտ էր, որ տնտեսության հետագա

¹ O'Neill PM, Weller S. To What Extent has Australia's Development Trajectory Been Neoliberalist? Human Geography. 2013;6(2):69-84. doi:[10.1177/194277861300600206](https://doi.org/10.1177/194277861300600206), p.73

գարգացման համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ: Նոր մոտեցումների հիմքում դրվեց տնտեսության ազատականացման գաղափարախոսությունը, որի շրջանակներում կրճատվեցին մաքսատուրքերը, որդեգրվեց լողացող փոխարժեքի քաղաքականություն, մասնավորեցվեցին խոշոր պետական ձեռնարկություններ:

Ավստրալիայի փայլուն հաջողություններ արձանագրած ոլորտներից առանձնանում է նաև արտասահմանյան ուսանողների բարձրագույն կրթության կազմակերպման ոլորտը¹: Հետևողական աշխատանքի շնորհիվ Ավստրալիան վերածվել է կրթական ծառայությունների արտահանման շուկայի կարևորագույն մասնակիցներից մեկի, որտեղ կրթություն են ստանում 600-700 հազար արտասահմանյան ուսանողներ: Օտարերկրյա ուսանողների շուրջ 15 տոկոսը կրթությունն ավարտելուց հետո մշտական բնակություն է հաստատում Ավստրալիայում՝ այդպիսով ապահովելով դրական միգրացիոն հաշվեկշիռ:

¹ Мосолова О.В., НАУЧНО-ТЕХНИЧЕСКАЯ ПОЛИТИКА ПРАВИТЕЛЬСТВА АВСТРАЛИИ, с.103-104

Ամփոփելով Ավստրալիայի տնտեսական պատմության առանցքային իրադարձություններն ու օրինաչափությունները՝ կարելի է հետաքրքիր գուգահեռներ տանել հայկական իրականության հետ: Ավստրալիայի տնտեսական հաջողությունները կրկնօրինակելու նպատակով անհրաժեշտ է մշակել ոլորտային զարգացման ռազմավարություն՝ հաշվի առնելով ինչպես Ավստրալիայի, այնպես էլ համեմատության եզրեր ունեցող մյուս զարգացած երկրների փորձը:

1. Ավստրալիայում հանքարդյունաբերությունը տնտեսական առաջընթացի կարևոր գործոն է: Այն ճգնաժամային ժամանակահատվածներում օգնել է հաղթահարելու տնտեսական դժվարությունները՝ վերածվելով տնտեսությունն առաջ տանող շոգեքարշի: Շահագործվելով մասնավոր հատվածի կողմից՝ այն նպաստել է հարստության կուտակմանը, հանգեցրել ուղեկցող և փոխկապակցված ոլորտների զարգացմանը: Հայաստանում նույնպես հանքարդյունաբերությունը կարևոր նշանակություն է ունեցել, ուստի անհրաժեշտ է բոլոր շահառուների՝ մասնավոր հատվածի, պետության և հանրային շահերի զուգորդումը:

2. Ավստրալիայի տնտեսական պատմության սկզբնավորման պահից գյուղատնտեսությունը կարևորագույն նշանակություն է ունեցել: Այն

ուղղված է եղել դեպի արտաքին շուկաներ՝ հանդիսանալով արտարժույթի հոսքերի ապահովման կարևորագույն աղբյուր: Հայաստանը ևս շահագործում է գյուղատնտեսական ներուժը և կրկին արտաքին շուկաների կողմնորոշմամբ: Պետությունը պետք է ստանձնի հովանավորի և պաշտպանի դերակատարություն:

3. Ավստրալիան պատմականորեն՝ թե՛ քաղաքականապես և թե՛ տնտեսապես, կապված է եղել Մեծ Բրիտանիայի Թագավորության հետ: Դրա հետևանքով Մեծ Բրիտանիայի տնտեսական վայրիվերումները զգալի դրական և բացասական ազդեցություն են թողել Ավստրալիայի տնտեսության վրա: Նմանապես Հայաստանի և ԵԱՏՄ-ի, մասնավորապես ՌԴ-ի տնտեսական կապերը և կախվածությունները վճռորոշ են Հայաստանի տնտեսության համար՝ սահմանափակելով տնտեսական որոշումների և միջոցառումների շրջանակը: Այսինքն՝ կարող են ոչ միայն օգուտներ բերել, այլև խոչընդոտել տնտեսական առաջընթացը:

4. Ինչպես և բազմաթիվ զարգացած երկրներում, Ավստրալիան նույնպես զգալի ջանքեր է գործադրում բնակչության հավելաճի ապահովման ուղղությամբ: Այս խնդրի լուծման նպատակով Ավստրալիայում կարևոր նշանակություն

ունի ակտիվ միգրացիոն քաղաքականությունը: Հայաստանի տնտեսական և ազգային անվտանգության առաջիկա տարիների կարևորագույն մարտահրավերը բնակչության թվաքանակի հետագա կրճատումն է, որը բոլոր առկա կանխատեսումներով շարունակվելու է: Նման պարագայում անհրաժեշտ է մշակել և իրագործել «կրթություն–աշխատանք–մշտական բնակիչ–քաղաքացիություն» արդյունավետ շղթան, ինչը կապահովի որակյալ աշխատուժ և բնակչության աճ:

ԱՎԱՏՐԻԱ

Մարիամ Պողոսյան

Ավստրիան Եվրոպայի և աշխարհի զարգացած երկրներից մեկն է՝ Եվրոպայի տարբեր շրջանների միջև կենսական տարանցիկ կենտրոն, որ 20-րդ դարի համաշխարհային պատերազմներից հետո կարողացել է ապահովել վերելքի բարձր ցուցանիշներ:

Ավստրիայի զարգացման գաղտնիքը պայմանավորված է տնտեսական և զբաղվածության քաղաքականության համակարգով, որը հիմնված է սոցիալական շուկայական տնտեսության այն առանցքի վրա, որտեղ անհատական և կորպորատիվ բարգավաճումը կախված է փոխկապակցված շահերի ընդհանուր բարգավաճումից:

Արդյունավետ տնտեսական և զբաղվածության քաղաքականության իրականացումն էլ նպաստեց, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի փուլում Ավստրիայի վիճակը շատ ավելի լավ լինի, քան մյուս զար-

գացած պետություններին¹: Կրթությունը և զբաղվածության ապահովումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնաքարերն են: Ավստրիայում թե՛ միջնակարգ, թե՛ մասնագիտական, թե՛ բարձրագույն կրթությունն անվճար է: Երկրի տնտեսությունը բնութագրվում է լավ կրթված աշխատուժով և սոցիալական գործընկերության համակարգի շրջանակներում ղեկավարների և աշխատողների միջև կայուն հարաբերություններով, որը թույլ է տալիս իրականացնել երկարաժամկետ պլանավորում: Ժամանակի պահանջներին համապատասխանող և լավ կրթված աշխատուժ ունենալու գործում հատկապես էական է նաև Ավստրիայում կիրառվող մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈւ) համակարգը: Այս համակարգի իրականացումն ապահովում է աշխատաշուկայի անխափան աշխատանքը և օգնում իրականացնելու ապագա հնարավորությունները:

Հատկապես դիտարկման առարկա են դարձել Ավստրիայի տնտեսական վերելքի իրականացման հիմնական գործոնները՝ կրթության և

¹ <https://www.aspen.review/article/2017/austria%3A-not-exactly-a-miracle/>

գբադվածության համակարգերը: Դիտարկելով Ավստրիայի և Հայաստանի տվյալները և համադրելով դրանք՝ գտնում ենք, որ հետևյալ առաջարկությունների իրականացումը կնպաստի Հայաստանում տնտեսական աճին.

1. 2019թ.-ից Հայաստանում արդեն իսկ որոշ չափով ներդրվող աշկերտության ծրագիրը գուցակցել նաև աշխատանքային միասնական համաձայնագրերով, որոնք կկնքվեն գործատուի, ոլորտային ուղղվածության հասարակական կազմակերպության, արհմիության և կրթական հաստատության միջև: Այդ համաձայնագրերով կկարգավորվեն թե՛ աշխատաժամերը, թե՛ վարձատրության չափը, թե՛ ուսումնառության ժամանակ ստացվելիք արդյունքները:

2. Ավելացնել գիտության, հետազոտությունների և զարգացման ուղղվածությամբ պետական և մասնավոր ֆինանսավորումը, ժամանակի պահանջներին համապատասխանող աշխատակիցներ ունենալու համար իրականացնել մասնագիտական պահանջարկի վերլուծություն՝ բացահայտելու և՛ ապագայի մասնագիտությունները, և՛ մշակելու համապատասխան կրթական ծրագրեր:

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Մերի Մուրադյան

Զուգահեռներ անցկացնելով Հայաստանի Հանրապետության հետ՝ կարող ենք ասել, որ երկու երկրների տնտեսության համար գյուղատնտեսությունն առանցքային կարևորություն ունի: Հատկանշական է, որ երկու երկրների համար էլ էական նշանակություն ունի հացահատիկային մշակաբույսերի մշակությունը:

Բայց, ի տարբերություն Արգենտինայի, Հայաստանը ոչ միայն չի արտահանում հացահատիկային մշակաբույսեր, այլև չի կարողանում սեփական արտադրության հաշվին ապահովել այդ մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի անգամ 50%-ը: Իսկ 2020 թվականին տեղի ունեցած Արցախյան երկրորդ պատերազմի և դրա հետևանքով կորսված տարածքների պատճառով այս խնդիրն էլ ավելի է բարդացել: Ադրբեջանական տիրապետության տակ անցած շրջաններում էր գտնվում հացահատիկային մշակաբույսերի գրեթե 47,4 տոկոսը: Արցախը զրկվեց իր հացահատիկային բերքի մոտ 67,4%-ից: Եվ քանի որ հացահատիկի արցախ-

յան բերքի զգալի մասը արտահանվում էր ՀՀ, այդ պատճառով Հայաստանը բախվում է պարենային անվտանգության ապահովման և հացահատիկի համար նոր մատակարարներ փնտրելու խնդիրներին:

Հայաստանը 2019 թվականին կարողացել է ապահովել ցորենի պարենային ինքնաբավության ընդամենը 25,9%-ը: Այս առումով առաջարկվում է հետևել Արգենտինայի օրինակին:

Արգենտինայի գյուղատնտեսության զարգացման առանձնահատկություններից է ագրարային կոոպերատիվների լայն կիրառումը: Այդպիսի կոոպերատիվները նաև զբաղվում են արտադրանքի արտադրությամբ և իրացմամբ:

Գյուղատնտեսության մեջ Արգենտինայի փորձից Հայաստանի համար առաջարկում ենք.

- թարմացնել գյուղատնտեսական տեխնիկական բազան, Արգենտինայից ներմուծել բարձրորակ և բարձր արժեք ապահովող հացահատիկային, մասնավորապես ցորենի սերմացու և ցորենի ինքնաբավության մակարդակը բարձրացնել 50 % և ավելի:

- Ագրոարդյունաբերական ճյուղի եկամտաբերության բարձրացման համար նպաստել կոոպերատիվների ստեղծմանը:

- Ագրարային խորհրդատվության զարգացման համար ստեղծել օնլայն խորհրդատվական հարթակ, որտեղ գյուղատնտեսությամբ զբաղվողները հնարավորություն կունենան իրենց հարցերն ուղղելու մասնագետներին:

ԲՐԱԶԻԼԻԱ

Մերի Մանուչարյան

Բրազիլիայի պատմությունը քսաներորդ դարում քաղաքական և տնտեսական արդիականացման փորձի, տնտեսական կառավարման մեջ պետության մասնակցության տարբեր հայեցակարգերի մշակման և փորձարկման պատմությունն է: Բրազիլիայի գիտական համայնքի ներսում չկա կոնսենսուս «տնտեսական հրաշքի» պատճառների և բնույթի վերաբերյալ: Գիտական գրականության մեջ առանձնացվում են երեք տեսակետներ: Առաջին տեսակետի կողմնակիցները կարծում են, որ տնտեսության դրական փոփոխությունները հնարավոր դարձան քեյնսյան մոդելի կիրառման շնորհիվ, որը Բրազիլիայում հիմնված էր պետության տնտեսական նախաձեռնությունների, ընդլայնողական դրամավարկային ռազմավարության և կառավարության արտահանման խթանների վրա: Մեկ այլ հայեցակարգի շրջանակներում ուշադրությունը կենտրոնանում է համաշխարհային տնտեսության, ընդհանուր առմամբ, բարենպաստ տնտեսական իրավիճակի վրա, ինչը

կառավարության միջամտությունը դարձնում է երկրորդական գործոն: Ինչ վերաբերում է երրորդ հայեցակարգին, ապա այն հիմնված է տնտեսական հրաշքի ընկալման վրա՝ որպես մակրո և միկրո մակարդակներում Բրազիլիայի տնտեսության ինստիտուցիոնալ փոփոխությունների հետ կապված ֆենոմենի:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ՀՀ-ի համար առաջարկվում է Բրազիլիայի օրինակով ուշադրություն դարձնել ագրարային ոլորտին, և այն զարգացնելու համար անհրաժեշտ է ստեղծել նորարարական տեխնոլոգիաների ներդրման կառուցակարգեր, սակայն քանի որ այս տեխնոլոգիաները կապիտալատար են, և ՀՀ ֆերմերների շրջանում ակնհայտ է ֆինանսավորման աղբյուրների բացակայությունը, ապա այս պարագայում Բրազիլիայի օրինակով մեծ դերակատարում պետք է ունենա պետությունը: Ինչի արդյունքում մենք կարող ենք նաև ընդլայնել արտահանման ծավալները, ինչն անվերապահորեն ցանկացած երկրի տնտեսության զարգացման համար հսկայական կարևորություն ունի, քանի որ ուղղակիորեն կապված է ՀՆԱ-ի աճի հետ, ինչպես նաև բարելավել պարենային հաշվեկշիռը, մասնավորապես ինքնաբավության մակարդակը:

Բրազիլիայի օրինակով հարկ է ուշադրություն դարձնել սոցիալական ծրագրերի առաջնահերթությանը, քանի որ մեր այս փոքր երկրի համար աղքատության մակարդակը բավականին բարձր է. 2019թ.-ին աղքատության մակարդակը եղել է 43,8%, որից ծայրահեղ աղքատ է 1,4%-ը:

Ինչպես Բրազիլիայում, այնպես էլ ՀՀ-ում ենթակառուցվածքները դանդաղ են զարգանում, որոնք մեծապես տուժել են ներդրումների պակասից: Ինչպես նկատեցինք, Բրազիլիայում ձեռնարկությունների նորարարական ներուժը ճանաչվում է որպես գերակայություն գիտության և տեխնոլոգիայի զարգացման մեջ: Սա նույնպես ուսանելի է ՀՀ-ի համար, քանի որ զարկ տալով գիտության և տեխնոլոգիայի զարգացմանը՝ կարող ենք զարգացնել վերամշակող արդյունաբերությունը, հատկապես սարքավորումների առումով, և տեղում արտադրել մեքենասարքավորումներ, ինչու չէ նաև ռազմական տեխնիկա, որը շատ կարևոր է մեզ նման պատերազմական վիճակում գտնվող երկրի համար:

ԳԵՐՄԱՆԻԱ

Ռոբերտ Մարինյան

XX դարում երկրորդ անգամ Գերմանիայի տնտեսության համար նորից էր ստեղծվել ճգնաժամային կացություն: Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում երկրի արտադրական հզորությունների 2/3-ը չէին աշխատում: Գյուղատնտեսությունը, շինարարությունը, տրանսպորտը հետ էին շարտվել տասնյակ տարիներ, տիրում էր խոր ինֆլյացիա, ֆինանսական համակարգը կազմալուծվել էր:

Տնտեսական ռեֆորմը դարձել էր անհրաժեշտություն: Այն սկզբունքները, որոնցով իրականացվել են տնտեսական ռեֆորմների դժվարին ու գործնական ուղին ստացել է սոցիալական շուկայական տնտեսություն անվանումը: Դրանք են.

- մրցունակությունն այն ուժն է, որի միջոցով կարելի է հասնել բառիս լավագույն իմաստով առաջընթացի և շահույթի սոցիալիզացիայի, ընդ որում այն թույլ չի տալիս մարել աշխատանքային նվաճումների հասնելու յուրաքանչյուրի ձգտումը, առավելապես բազմապատկել բարեկեցությունը, բայց ոչ Աստվածաշնչում են-

թաղրվող հարստությանն ու առատությանը, որոնք ցովության և արատների ճանապարհ են բացում:

- Սոցիալական շուկայական տնտեսությունը պլյուրալիստական, հաշտարարական կարգ է, որը հիմնվում է ոչ թե դասական տնտեսագիտության *laisser-faire* լիբերալ մտայնության սկզբունքի վրա, այլ հաղթահարելու սոցիալական առաջընթացի և ազատ ձեռներեցության հակադրությունը՝ որպես լիբերալ, շուկայական և պետական վերահսկողության վրա հիմնված տնտեսություններից տարբեր երրորդ ձև:

- Սոցիալական շուկայական տնտեսական կարգի էական բաղադրիչն անձնական ազատությունն է. «Որքան տնտեսությունն ազատ է, այն առավել սոցիալական է»:

- «Բարեկեցությունը բոլորի համար» և «Բարեկեցությունը մրցակցության միջոցով»: Մեկը նպատակն է, մյուսը՝ այդ նպատակին տանող ճանապարհը:

- Սովորաբար տնտեսության ազատ մրցակցության պայմաններում գինը չի կարող թելադրվել այս կամ այն սուբյեկտի կողմից: Մոնոպոլիստական միավորումներում ոչինչ դրական չկա ժողովրդատնտեսական շահերի տեսակետից:

- Եթե որևէ կարգի պայմաններում բոլոր մարդիկ հավասարապես քաղցած են, ապա դա արդարացի բաշխման, ապահովվածության կամ սոցիալական հարցի լուծում չէ: Հասարակությունը պետք է գիտակցի, որ կենսամակարդակի բարձրացումը կապված է ոչ այնքան բաշխման խնդրի, որքան արտադրության, ավելի ստույգ՝ արտադրողականության հետ:

- «Գիշերային պահակի» պետությունը մնացել է անցյալում: Տնտեսությունը գործում է ոչ թե «անհոգի ավտոմատիզմի» սկզբունքով: Այն ձևավորում է պետությունը, ինչպես ֆուտբոլի դաշտում դատավորը, որը կոչված է ոչ թե խաղին մասնակցելու, այլ պահպանելու խաղի կանոնները: Մարդկային հանրության ցանկացած ձև պահանջում է պարտադիր «խաղի կանոններ»: Մրցակցությունը՝ որպես դրդիչ ուժ, իսկ ազատ գները՝ որպես կարգավորիչ, պետք է երաշխավորվեն համապատասխան օրենքներով:

- Սոցիալական ապահովությունը վերին աստիճանի բարիք է, բայց այն պետք է հիմնված լինի առաջին հերթին յուրաքանչյուրի սեփական էներգիայի, սեփական նվաճումների, յուրաքանչյուրի առանձին ձգտումների վրա: Սոցիալական ապահովությունը չի նշանակում սոցիալական ապահովություն բոլորի համար, այն

չի նշանակում պատասխանատվության փոխադրում կոլեկտիվի վրա: Սկզբում՝ սեփական անձնական պատասխանատվությունը և միայն այն դեպքում, երբ այդ պատասխանատվություն պարզվի՝ անբավարար է կամ անարդյունք, ուժի մեջ է մտնում մարդու նկատմամբ պետության կամ հասարակության պարտավորությունը:

- «Ժամանակակից հոգեբանությունն ուղղակի պահանջում է, որ տնտեսական գործընթացները ընկալվեն ոչ միայն որպես մեխանիկական, տեխնիկական գործընթացներ»: Տնտեսության սոցիալ-հոգեբանական կապերի բացահայտումն անհրաժեշտություն է շուկայի մասնակիցներին բացատրելու, թե ինչպիսի խելամիտ տնտեսական որոշումների կայացումն է համապատասխանում նրանց շահերին: Հոգեբանական ազդակները կարող են փոխել մարդկանց այս կամ այն գործողության բնույթն ու դրանով իսկ «վերախմբավորել տնտեսական գործոնները ժողովրդատնտեսական առավել նպատակահարմարության տեսանկյունից, ինչը բնավ չի հակասում կոնյունկտուրայի քաղաքականության ազատամտական մոդելին»:

Շնորհիվ վերը նշված սկզբունքների իրականացման՝ մեկ տասնամյակի (1948-1958) ընթացքում Գերմանիան իր բարեկեցությամբ ար-

դեն եվրոպական երկրների առաջատարների մեջ էր, իսկ «սոցիալական շուկայական տնտեսության» մոդելը վաղուց հատել է երկրի սահմանները և իր ուրույն տեղն է զբաղեցրել և՛ համաշխարհային տնտեսագիտական մտքի, և՛ նրա իրացման փորձի առումով:

ԹԱՅՎԱՆ

Լիլիթ Մարգարյան

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Հայաստանի և Թայվանի տնտեսությունները նմանություններ գրեթե չունեն, մինչդեռ խորքային վերլուծությունն ապացուցում է ճիշտ հակառակը: Թայվանի տնտեսությունն արագընթաց աճ գրանցելուց առաջ զգալիորեն տուժել էր պատերազմից: ՀՀ տնտեսությունը այժմ գտնվում է հենց այդ նախնական փուլում:

Հիմք ընդունելով Թայվանի տնտեսական զարգացման 70-ամյա փորձի ուսումնասիրության արդյունքները և համադրելով դրանք ՀՀ-ում առկա հիմնախնդիրների հետ՝ առաջարկվել և հիմնավորվել է ՀՀ տնտեսության առաջանցիկ աճ ապահովող նոր մոդել՝ հետևյալ կառուցվածքով՝ ըստ առաջնահերթության. 1.կրթություն, 2.գիտություն, 3.նորարարություն, 4.արտահանում, 5.ներդրումներ: Յուրաքանչյուր ոլորտի համար առաջարկվում են հետևյալ բարեփոխումները:

ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդելի «կրթություն» հենասյան զարգացումը

Թեպետ արդի ժամանակահատվածում մենք զգալիորեն հեռացել ենք նախկին ավանդական կրթական համակարգից, այդուհանդերձ Թայվանի փորձը ցույց է տալիս, որ Թայվանում կրթության ոլորտի հաջողությունները թաքնված են հենց սովետական կրթական համակարգի մոդելով ոլորտի կառավարման մեջ: Ներկայում ՀՀ-ում կրթական հաստատությունը ֆինանսավորվում է աշակերտի/ուսանողի թվաքանակի հիման վրա, ուստի այդ թվաքանակի նվազումը (անբավարար գիտելիքներ ունեցող աշակերտի/ուսանողի հեռացումը) ազդում է կրթական հաստատության, այդ թվում՝ գնահատող ուսուցչի/դասախոսի առանց այդ էլ ցածր ֆինանսավորման վրա: Ըստ այդմ, կարծում ենք, որ կրթական հաստատության ֆինանսավորումը պետք է կապակցված լինի սովորողների թվին, սակայն չնվազի նրանց նվազման պարագայում: Բացի այդ առաջարկում ենք հանրապետական և այլ մրցույթներում և օլիմպիադաներում հաղթող աշակերտի/ուսանողի համապատասխան կրթական հաստատությանը տրամադրել լրացուցիչ ֆինանսավորում՝ որպես խրախուսում:

Հաջորդ համակարգային բարեփոխումը կրթական ոլորտում, կարծում ենք, պետք է աշակերտական նստարանից նորարարական մտածելակերպի ներդրումն է: Կարծում ենք՝ այս խնդրի լավագույն լուծումը «Արմաթ» կամ նմանատիպ այլ ինժեներական լաբորատորիաների ցանցի ներդրումն է ողջ հանրակրթական համակարգում:

ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդելի «գիտություն» հենասյան զարգացումը

Թեպետ ներկայում ՀՀ-ում նախատեսվում է գիտության ֆինանսավորման որոշակի աճ, այդուհանդերձ, նախ՝ այն բավարար չէ որակյալ գիտություն ունենալու համար, և բացի այդ, կարծում ենք, որ հիպոթետիկ՝ որևէ ցուցանիշի վրա չհիմնված ֆինանսավորման ավելացումը չի կարող հուսալի տնտեսական աճի հիմք հանդիսանալ: Այս տեսանկյունից հիմնվելով Թայվանի փորձի վրա՝ կարող ենք առաջարկել կապակցել գիտությանը տրամադրվող ֆինանսավորումը ՀՆԱ-ի հետ՝ ֆիքսելով ՀՆԱ-ի որոշակի տոկոս (Թայվանում զարգացման սկզբնական փուլում ՀՆԱ-ի 3 տոկոսն էր):

Կարծում ենք, որ Հայաստանում գիտություն-պետություն խզված կապն էլ տնտեսական աճի ոչ արդյունավետ մոդելների ընտրության պատ-

ճառներից մեկն է: Այդ տեսանկյունից Թայվանի օրինակով կարող ենք առաջարկել ՀՀ գիտահետազոտական կազմակերպությունների ֆինանսավորումը տրամադրել պետական պատվերի հիման վրա: Յուրաքանչյուր նախարարություն պետք է աշխատի իր ոլորտի գիտահետազոտական կազմակերպությունների հետ՝ ապահովելով նախարարության կողմից կատարվող վերլուծությունների, մշակումների և կանխատեսումների գիտական հիմքը: Կարծում ենք՝ անհրաժեշտ է ստեղծել բազային և գրանտային հիմունքներով իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների կիրառելիությունը տնտեսությունում ստուգող խորհուրդ, որի մշտադիտարկման արդյունքների հիման վրա էլ կգնահատվի տվյալ վերլուծությունն իրականացրած գիտական խմբի հետագա ֆինանսավորման նպատակահարմարությունը:

Նորարարական տնտեսության զարգացումը

Թայվանի օրինակով Հայաստանում անհրաժեշտ է զարգացնել նաև տեխնոպարկերի մոդելը՝ դրանցում գրանցվելու և տրամադրվող բոլոր արտոնություններից օգտվելու առաջնությունը տալով այն կազմակերպություններին, որոնց առաջարկած տեխնոլոգիաներն արդեն

իսկ անցել են մշակումների և փորձարկումների փուլը:

Արտահանման խթանման քաղաքականությունը

Թայվանի փորձից ելնելով՝ առաջարկում ենք ՀՀ-ում արտահանման խթանման կառույցի ստեղծում, որի գործունեությունը պետք է պարունակի հետևյալ գործառույթները՝ երկրի իմիջի կառուցում և երկրի բրենդի ստեղծում, արտահանմանն աջակցության համար տեխնիկական աջակցության տրամադրում, անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում, արտահանման խթանման նպատակով ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում գործող կազմակերպությունների գործունեության համակարգում, մարքեթինգային ծառայություններ, շուկայական հետազոտություններ և հրապարակումներ:

Ներդրումների ներգրավման խրախուսումը

Ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից նախ և առաջ պետք է կարևորվի ներդրումների ներգրավման ռազմավարության մշակումը: Թայվանի ներդրումային հարթակը լավագույններից է աշխարհում: Համանման մոդելով մեր կողմից առաջարկվում է ստեղծել ներդրումային առցանց հարթակ, որտեղ կհան-

դիպեն ներդրման կարիք և ներդրման հնարավորություն ունեցող տնտեսական սուբյեկտները: Թայվանի օրինակով առաջարկում ենք ներդնել օտարերկրյա գործարարների հարցերին պատասխանող, ինչպես նաև օտարերկրյա գործարարների և պետական մարմինների միջև առաջացող խնդրահարույց իրավիճակների լուծմամբ զբաղվող «1 պատուհանի սկզբունք»՝ իր պաշտոնական կայքէջով, ինչպես նաև դրան կից էջերով linkedin և facebook սոցիալական հարթակներում¹:

¹ Սարգսյան Լ., Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման հեղափոխական մոդելը, Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում, գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, «Գիտություն» հրատ., 2019, էջ 226-246:

ԷՍՏՈՆԻԱ

Ռազմիկ Բաահակյան

Էստոնիայի զբոսաշրջության ոլորտը տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղություններից է: Ամեն տարի 5.000.000 զբոսաշրջիկ է այցելում Էստոնիա:

Զբոսաշրջության ոլորտը երկար տարիներ ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթություններից է նաև մեր երկրում և անընդհատ իր տեղը գտել է տնտեսության զարգացման գերակայություններում: Զբոսաշրջության ոլորտի զարգացման տեսլականը ներառված է 2018–2019թթ. ՀՀ կառավարության ծրագրում, տնտեսության զարգացման երեք առաջնահերթություններից մեկն է և կարող է դառնալ մեր երկրի տնտեսության զարգացման շարժիչ ուժը և մեկնակետը: 2009-2018թթ. 10-ը տարիների ընթացքում զբոսաշրջային հոսքերը դեպի մեր երկիր եռապատկվել են՝ հասնելով ավելի քան 1.500.000 մարդու, ինչն ավելի է ընդգծում, որ տվյալ ոլորտն ունի զարգացման լուրջ ներուժ, և այն կարելի է համարել ՀՀ տնտեսության

զարգացման այլ ճյուղերին իրական այլընտրանք¹:

Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտի խթանման համար առաջարկում եմ.

- համայն աշխարհում ՀՀ-ն ներկայացնել՝ որպես քրիստոնեությունը առաջինը պետական կրոն հռչակած երկիր,

- հարկային արտոնություններ տրամադրել զբոսաշրջային ընկերություններին և ներդրողներին՝ նպաստելով ներքին զբոսաշրջության զարգացմանը,

- հետևողականորեն վերականգնել Սևանա լճի՝ որպես հանգստյան գոտու կարգավիճակը, որով մեր երկիրը կարելի է դարձնել նաև կարճատև զբոսաշրջային այցերի հանգրվան, մասնավորապես մեր դարավոր հարևանների՝ Վրաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության զբոսաշրջիկների համար,

- գործարար զբոսաշրջիկներին ներգրավել տնտեսության զարգացմանը նպաստող ոլորտներում և տարբեր գնողունակություն ունեցող զբոսաշրջիկների համար մշակել մատչելի փաթեթներ ու իրագործել արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն,

¹ ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, 2009-2018թթ., www.armstat.am

- դիվանագիտական՝ ներքին և արտաքին, գործիքակազմերով ընդգծել ՀՀ հեղինակությունը, ցուցաբերել առանձնահատուկ վերաբերմունք զբոսաշրջիկների հանդեպ, վերականգնել զբոսավարների և զբոսաշրջային ընկերությունների լիցենզավորման հարցը, որոնց գործարկման արդյունքում էլ կավելանան դեպի մեր երկիր այցելող զբոսաշրջիկները:

ԻՍԼԱՆԴԻԱ

Գայանե Թովմասյան

2000-ական թթ. սկզբին Իսլանդիայի տնտեսությունն արագ աճում էր՝ համարվելով Եվրոպայի նոր տնտեսական հրաշքը: Երբ սկսվեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, երկիրը հայտնվեց անմխիթար վիճակում: 2008թ. հոկտեմբերին Իսլանդիայում փլուզվեցին երեք խոշորագույն բանկեր՝ Glitnir, Landsbanki և Kaupthing: Իսլանդական բանկերի արտաքին պարտքը կազմեց 3,5 միլիարդ եվրո՝ 10 անգամ ավելի շատ, քան երկրի ՀՆԱ-ն, իսլանդական կրոնը եվրոյի համեմատ արժեզրկվեց 85%-ով:

Ճգնաժամից դուրս գալու համար կառավարությունը բոլոր բանկերը վերցրեց իր վերահսկողության տակ: Անմիջապես ընդունվեց նոր օրենսդրություն, որը թույլ տվեց ստեղծել երեք նոր պետական սեփականություն համարվող բանկեր և այնտեղ փոխանցել խնդրահարույց բանկերի ակտիվների մի մասը և ներքին ավանդները: Օտարերկրացիների ավանդները հարվածի տակ էին: Ներդրվեցին կապիտալի շարժի սահմանափակումներ: Օտարերկրյա ներդրող-

ները կորցրին իրենց փողերն անմիջապես դուրս բերելու հնարավորությունը: Այդ ժամանակ երկրում օտարերկրյա կապիտալի ծավալը համապատասխանեց ՀՆԱ-ի 40%-ին:

Ճգնաժամը հաղթահարելու հաջողության գաղտնիքը համարվում է այն, որ թույլ են տվել բանկերին սնանկ ճանաչվել և արժեզրկել ազգային արժույթը: Արժեզրկումը թույլ տվեց վերականգնել արտահանման մրցունակությունը, բանկերը չփրկելու որոշման շնորհիվ պետական բյուջեն մնաց հավասարակշռված:

Նոր կառավարության օրակարգում հիմնական խնդիրը նոր սահմանադրության մշակումն էր: Կառավարությունը որոշեց այնպես անել, որ քաղաքացիներն իրենք սահմանադրություն գրեն: Այդ նպատակով 2010թ. նոյեմբերին ստեղծվեց Ազգային ժողով, որին կարող էին մասնակցել բոլոր ցանկացողներն ամբողջ երկրի մասշտաբով: Յուրաքանչյուր շաբաթ կայքում տեղադրվում էին սահմանադրության նախագծի աշխատանքային տարբերակները, որպեսզի մարդիկ ծանոթանան, մեկնաբանություն և առաջարկություններ անեն: Սա ժողովրդավարության մասնակցային սկզբունքների կիրառման հաջող փորձ է, 2012թ. հոկտեմբերի 20-ին հանրաքվեով հաստատվեցին նոր սահմանադրու-

թյան հիմնական դրույթները: Իսլանդիայի փորձից ելնելով՝ Հայաստանում կայուն զարգացման համար խիստ կարևոր է վերականգնվող էներգիայի և էներգախնայողության, կանաչ շինարարության, կայուն հանրային տրանսպորտի համակարգերի մշակման, աղտոտման նվազեցման և կանաչ տարածքների ընդլայնման քայլերի իրականացումը:

Հայաստանում զարգացման մեծ հեռանկարներ ունի զբոսաշրջությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները, ուստի պետք է քայլեր ձեռնարկվեն զբոսաշրջության մրցունակության հիմնական պարամետրերի բարելավման ուղղությամբ:

Իսլանդիայի նոր սահմանադրությունն մշակելու փորձը կարող է կիրառվել՝ ներգրավելով հանրության տարբեր շերտերին դրա ստեղծման աշխատանքներում՝ ներդնելով աշխատանքների կազմակերպման և կատարման առցանց համակարգ:

ԻՍՊԱՆԻԱ

Գևորգ Հարությունյան

Հայաստանի առջև ծառացած գերխնդիրը պետության ընդլայնված միջամտությամբ տնտեսության անհապաղ արդիականացումն է: Սա ենթադրում է թոփաքային զարգացում, ինչն իր հերթին հստակ պատվեր է գիտությանը՝ բացահայտել գերարագ տնտեսական աճի ֆինանսական և վարչական խթանման այն մեխանիզմները, որոնք առավել ընդունելի են Հայաստանի տնտեսության համար:

Իսպանական «տնտեսական հրաշքը» տեղի է ունեցել երկու անգամ:

Առաջինը գրանցվեց 1963-1973 թվականներին: 1963 թվականից ի վեր Իսպանիան ապահովեց տնտեսության թոփաքային զարգացում՝ արդյունաբերական աճով գերազանցելով Եվրոպային և ԱՄՆ-ին:

Տնտեսական քաղաքականության ընդհանուր նպատակն էր լճացած հատվածներում ապահովել արտադրության աճ, պետության և մասնավոր կապիտալի համատեղ մասնակցությամբ տնայ-

նագործական արտադրությունը վերածել արդյունաբերական համալիրների:

1985-1991 թվականների երկրորդ «տնտեսական հրաշքը» կապված էր օտարերկրյա ուղղակի ներդրումների աճի, ֆինանսական շուկայի հասունության, ազատականացման գործընթացի արագացման, ԵՏՄ-ին անդամակցության, գնաճի և գործազրկության պայմաններում արդյունաբերական աճի հետ:

Գերաբազ աճի ուղին ընտրած Իսպանիան ուներ իր զարգացման վարչակազմը, որին շնորհվել էին բացառիկ լիազորություններ՝ գերաբազ տնտեսական զարգացման կենտրոնական կառավարում, մշակվող ռազմավարությունների և ծրագրերի վերահսկողություն, մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների կազմում և իշխանության լիազոր մարմինների գործողությունների համակարգում:

Հաշվի առնելով Իսպանիայի տնտեսության զարգացման փորձը՝ առաջարկվում է ՀՀ տնտեսության արագ աճի համակարգային մոտեցումը.

- «զարգացման վարչակազմի» ստեղծում,
- պետական ծառայության նոր մոդելի մշակում, որը հիմնված կլինի երեք հիմնական սկզբունքների վրա՝ մերիտոկրատիա, ազնվություն և արդյունավետություն,

- չափավոր մեղմ դրամավարկային քաղաքականություն և ոչ դրամական գնաճի ճնշում (պետության կողմից կարգավորվող գներ և սակագներ),

- չափավոր թույլ դրամի փոխարժեք,

- խիստ պարզ հարկային խթաններ՝ ուղղված աճին և արդիականացմանը + արագացված ամորտիզացիա,

- առավելագույն արտոնություն օտարերկրյա ուղղակի ներդրումներին,

- բյուջետային ներդրումներ տնտեսության մեջ (այդ թվում՝ պետական պարտքի աճի միջոցով),

- մարզերի համաչափ զարգացման կարևորում, մասնավորապես՝

- ագրոտուրիզմի ոլորտի զարգացման ծրագրի մշակում՝ որպես գյուղատնտեսական ոլորտի քայքայումը և գյուղական վայրերից բնակչության արտագաղթը կանխելու միջոց,

- գյուղատնտեսության կայուն զարգացմանն ուղղված ապահովագրության պետական քաղաքականության իրականացման համակարգված մոտեցման մշակում՝ հիմք ընդունելով իսպանական մոդելը:

- Առավելագույն արտոնություն միջին խավի համար՝ մարզերում գույքի ձեռքբերման, սոցիա-

լական ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու համար,

- մարզերում մատչելի վարկերի ընդլայնում,
- գործարար միջավայրում կոլեկտիվ ձեռնարկության իսպանական մոդելի ներդրման քաղաքականության մշակում,

- կառուցվածքային բարեփոխումներ (ապակենտրոնացում, մրցակցային միջավայրի ստեղծում, ուժեղ հակամենաշնորհային կարգավորում, գույքի պաշտպանություն, անկախ դատարաններ):

ԻՍՐԱՅԵԼ

Մերի Մանուչարյան

Անցյալ դարի 90-ականների կեսերից սկսած՝ իսրայելական տնտեսությունը ենթարկվել է էական կառուցվածքային փոփոխությունների՝ կապված բարձր տեխնոլոգիաների ներդրման և արդյունաբերության վերակենդանացման հետ:

Իսրայելը ռազմականացված տնտեսությամբ ագրարային-արդյունաբերական երկիր է: Լինելով տարածքով փոքր և աշխարհագրական դիրքով ոչ բարենպաստ երկիր՝ կարողացել է էական զարգացման հասնել տարբեր ոլորտներում՝ ներառյալ գյուղատնտեսությունում: Իսրայելի գյուղատնտեսությունը երկրի ազգային տնտեսության գերզարգացած ոլորտներից մեկն է: Երկրում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքը կազմում է ՀՆԱ-ի 2,5%-ը և արտահանման կառուցվածքի 3,6%-ը: Երկրի աշխատուժի 3,7%-ը զբաղված է գյուղատնտեսությունում, ընդ որում Իսրայելը 95%-ով բավարարում է սեփական պահանջմունքները: Երկրում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկի խնդիրը գրեթե արմատախիլ է արվել, քանի որ տնտե-

սություններն ունեն պետության կողմից սահմանված արտադրության և ջրօգտագործման ծավալային սահմանափակումներ, այն է՝ քվոտաներ յուրաքանչյուր մշակաբույսի համար, ինչն իրապես օգնում է կայունացնելու գյուղատնտեսական արտադրանքի գները:

Փոքր տարածք և սահմանափակ բնական ու ֆինանսական ռեսուրսներ ունեցող Իսրայել պետությունը, որը նաև շարունակական ռազմական հակամարտության մեջ է իր հարևանների մի մասի հետ, ստիպված է անընդհատ որոնել ոչ ստանդարտ՝ ստեղծագործական լուծումներ՝ երկրի առաջընթացն ապահովելու համար: Խոսքը հատկապես գիտության, մասնավորապես բարձր տեխնոլոգիաների բնագավառում գրանցվող հաջողությունների մասին է:

Իսրայելական բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններն ավելի հանրաճանաչ են, քան ամերիկյան ընկերությունները. եթե առաջին չորս տարիներին ներդրումներն այստեղ աճել են 140%-ով, ապա ԱՄՆ-ի տեխնոլոգիական ստարտափերում՝ ընդամենը 64%-ով:

2018 թ. ներդրված գումարների քանակով գլխավոր 5 ոլորտներն են.

կիբերանվտանգությունը՝ 1,19 միլիարդ դոլար, առողջապահությունը՝ 900 միլիոն դոլար,

Ֆինանսական ծառայությունները՝ 832 միլիոն դոլար, տրանսպորտը՝ 753 միլիոն դոլար, որը 2017 թ. արդյունքից կրկնակի ավելին է: Բոլորից առաջ Gett-ն է՝ 80 միլիոն դոլար արժողությամբ:

Գյուղատնտեսությունը և սնունդը (ագրո-տեխնոլոգիա և սննդի տեխնոլոգիա)՝ 196 միլիոն դոլար:

Բոլոր ոլորտներում առաջատար տեխնոլոգիան դարձել է արհեստական բանականությունը, որն օգտագործում են նորարարական բոլոր ստարտափերի 17%-ը:

Հարկերը Իսրայելի գանձարանի եկամտի մեծ մասն են կազմում: Եվ նրանք այստեղ բավական բարձր են: Եկամուտների ավելացմամբ մեծանում է եկամտահարկի տոկոսը:

Նաև արժե առանձնացնել Իսրայելի բժշկությունը: Ամեն տարի կառավարությունը ՀՆԱ-ի ընդհանուր մասնաբաժնի ավելի քան 8%-ը հատկացնում է առողջապահության ոլորտին:

Իսրայելի ուժեղ կողմերից մեկը նրա բանակն է՝ ՑԱԽԱԼ-ը, որը համարվում է աշխարհում ուժեղագույններից մեկը: Այստեղ բոլորը զորակոչվում են զինվորական ծառայության. սղամարդիկ՝ երեք տարով, կանայք՝ երկու: Բանակից խուսափելու գաղափար այստեղ պարզապես գոյություն չունի: Իրենք՝ իսրայելա-

ցիները, ասում են. «Մեր բանակը շքերթների համար չէ, այլ պատերազմի»: Այդ իսկ պատճառով նրանք ժամանակ չեն ծախսում մարտական պատրաստության վրա: Եվ շարահրապարակում ժամերով քայլելու փոխարեն զինվորները սովորում են զենքի տիրապետման տեխնոլոգիան:

Թեպետ Իսրայելի տարածքի կեսից ավելին զբաղեցված է անապատով, այնուամենայնիվ.

- Իսրայելը կարողանում է ապահովել իր երկրի պարենային պահանջարկի 95%-ը:

- Երկիրն առաջինն է եղել կաթիլային ոռոգման համակարգերի զարգացման և ներդրման ոլորտում, կյանքի մակարդակն ամենաբարձրն է Մերձավոր Արևելքում: Այդ երկրում յուրաքանչյուր բնակչին հասանելիք ՀՆԱ-ն ավելի բարձր է, քան Մեծ Բրիտանիայում (2019թ. տվյալներով Իսրայելում 1 բնակչի հաշվով ՀՆԱ-ն \$43 199 է, իսկ Մեծ Բրիտանիայում՝ \$41 030):

Իսրայելում ամեն ինչ օգտագործվում է խնայողաբար: Այստեղ քաղցրահամ լճին վերաբերվում են առանձնահատուկ: Եթե լճի մակարդակն իջնում է, ապա այդ օրը ՋԼՄ-ները դա հայտարարում են ամբողջ երկրով մեկ, և բոլորը փակ են պահում ծորակները՝ ջուր խնայելու համար: Այստեղ հաշվված է հողի ամեն մի կտորը, ջրի

ամեն մի կաթիլ նախատեսված է բույսերի համար և անհիմաստ չի ծախսվում, փորձ է արվում ամեն կերպ օգտագործել արևային էներգիան:

Իսրայելական տնտեսության դինամիկ զարգացման ևս մեկ հիմնական գործոն էր 20-րդ դարի վերջին տասնամյակում նախկին ԽՍՀՄ-ից բարձր հմտություններ ունեցող ավելի քան մեկ միլիոն ներգաղթյալների մեծ ներհոսքը, որոնցից շատերը բարձրակարգ գիտնականներ և ճարտարագետներ էին: Եվ ամենակարևորը. հրեա ժողովուրդը մի ընդհանուր հատկանիշ ունի, ինչը նրանց օգնել է գոյատևելու նույնիսկ ամենաբարդ ժամանակներում, դա նրանց միասնականությունն է:

Ամփոփելով նշենք, որ կատարված ուսումնասիրությունները հիմք են՝ եզրակացնելու, որ Իսրայելն ու Հայաստանն ունեն մի շարք ընդհանրություններ: Հայաստանը, Իսրայելի տնտեսական որոշ մոտեցումներ կիրառելով, նույնպես կարող է հասնել տնտեսական հրաշքի:

ԻՐԱՆ

Տաթևիկ Շահինյան

Գրեթե քառասուն տարի առաջ Իրանն աշխարհի ամենադինամիկ տնտեսություններից էր, տարածաշրջանի ամենազարգացած երկիրը: Ամեն ինչ փոխվեց 1979 թվականի Իսլամական հեղափոխությունից հետո. միջազգային մեկուսացումը երկիրը հանգեցրեց տասնամյակների անկման:

Գիտատեխնիկական զարգացման ժամանակակից շրջափուլի սկիզբը կարելի է համարել 2000 թվականը, որը համընկնում է նաև երկրի զարգացման երրորդ հնգամյա ծրագրի ընդունման հետ (2001-2005 թթ), որում առաջին անգամ առանձին գլուխ էր հատկացված գիտության և տեխնոլոգիայի ոլորտի զարգացմանը: Կառավարությունը որոշում կայացրեց ռեսուրսների վրա հիմնված տնտեսությունից անցում կատարել դեպի գիտելիքահենք տնտեսության՝ 2005 թվականին ընդունված 20-ամյա «Տեսլական 2025» ծրագիր: Այս անցումը դարձավ առաջնահերթ այն բանից հետո, երբ 2006 թվականից աստիճանաբար ներդրվեցին միջազգային պատժա-

միջոցները, և էլ ավելի խստացան նավթային էմբարգոյի (բեռնարգելքի) սահմանափակումները: Երկրի համար մշակվել էր նոր տնտեսական ծրագիր, որը կոչում էին նաև «դիմադրողական տնտեսություն», որի համաձայն՝ խթանվում էր նորարարությունը՝ նվազեցնելով կախվածությունը ներմուծումից:

Երկրի գիտական մակարդակը ցույց տվող կարևորագույն չափանիշներից մեկը գիտնականների՝ հեղինակավոր գիտական աղբյուրներում հրապարակած հոդվածներն են:

Իրանի գիտական կազմակերպությունները, մասնավորապես Գիտության և տեխնոլոգիաների հետազոտական կազմակերպությունն ու Գիտական քաղաքականության հետազոտությունների ազգային ինստիտուտը, գտնվում են Գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության ենթակայության ներքո, որն էլ զբաղվում է ոլորտին վերաբերող բոլոր հարցերով: Նրանք են պատասխանատու ազգային հետազոտական քաղաքականության մշակման համար:

Իրանի կառավարությունը նաև տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում գիտական կազմակերպություններին: Մասնավորապես Գիտության, հետազոտությունների և տեխ-

նույն ժամանակների նախարարության կայքում առկա է բոլորին հասանելի պետական գիտական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկագիր, որը պարունակում է անգլերենով տեղեկատվություն գիտության տարբեր ոլորտներում մասնագիտացած ավելի քան 300 գիտական կազմակերպությունների վերաբերյալ: Գիտահետազոտական ինստիտուտների և իմբերի վերաբերյալ հիմնական տեղեկատվության անվճար հասանելիությունն օգնում է կազմակերպել համատեղ աշխատանք ներքին և միջազգային ոլորտում, ներգրավել մասնավոր ընկերություններին՝ հետազոտություններ ֆինանսավորելու և հետազոտությունների արդյունքների առևտրայնացման նպատակով:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ Իրանում մշակված զարգացման ռազմավարական ծրագրերը, մասնավորապես «Տեսլական 2025-ը», հանգեցրել են էական որակական փոփոխությունների գիտության ոլորտում:

Հնդկաժում կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարել ստորև բերվող 3 կիրառական առաջարկություններ, որոնք հնարավոր է գործարկել Հայաստանում.

1) կրթական ու գիտահետազոտական բոլոր կազմակերպությունները փոխադրել մեկ միասնական մարմնի ենթակայության ներքո՝ ստեղծելով ոլորտին առնչվող վիճակագրական տվյալների հավաքագրմամբ ու մշակմամբ զբաղվող ստորաբաժանում:

2) Մշակել համապատասխան օրենսդրական կարգավորումներ, համաձայն որոնց՝ ՀՀ-ում գործող համալսարանները նույնպես դիտարկվեն որպես գիտական գործունեություն ծավալող կարևորագույն օղակներ՝ պարտավորված լինելով իրականացնելու գիտահետազոտական գործունեություն, որոնց արդյունքները կլինեն չափելի ու հիմք կհանդիսանան երկրի տնտեսական զարգացման հեռանկարային ծրագրերի մշակման համար:

3) Մշակել ու ներդնել նորարարական ենթակառուցվածքներ, որոնք կապահովեն գիտահետազոտական կենտրոնների ու տնտեսության իրական հատվածի միջև կապը, կնպաստեն գիտական արդյունքների առևտրայնացմանն ու համապատասխան ոլորտներում դրանց գործարկմանը:

ԼԱՏՎԻԱ

Գոհար Ոսկանյան

Լատվիայի Հանրապետությունն արդյունաբերական-ագրարային երկիր է, որը 2004 թ. անդամակցել է Եվրամիությանը: Լատվիայի Հանրապետությանը բնորոշ է տնտեսվարման խառը մոդելը՝ հիմնված մասնավոր և պետական ոլորտների համագործակցության, ազատ շուկայական հարաբերությունների և տնտեսության կարգավորման վրա: Լատվիայի տնտեսության բազմակողմանի վերլուծություն է իրականացրել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), որի արդյունքներն ամփոփված են «ՏՀԶԿ-ի Տնտեսական հետազոտություններ - Լատվիա» աշխատության մեջ: Հաշվի առնելով ՏՀԶԿ-ի առաջարկությունները՝ Լատվիայի կառավարությունն իր առջև դրել է հետևյալ առաջնահերթությունները.

- փողերի լվացման դեմ պայքար,
- դատական համակարգի արդյունավետության բարձրացում,

- մրցակցային քաղաքականության իրականացում,
- սոցիալական համահարթեցում և հմտությունների ամրապնդում,
- վարչատարածքային բարեփոխումների իրականացում:

Լատվիայում խրախուսվում են օտարերկրյա ներդրումները: Ներդրողներն իրավունք ունեն ձեռք բերելու հող և անշարժ գույք: Երկրի համար կարևոր նշանակություն ունեցող տեղական և արտասահմանյան ներդրումային ծրագրերի բարելավման համար մշակվել է ներդրումների ներգրավման «POLARIS» ռազմավարությունը:

Լատվիայում տնտեսական զարգացման խոչընդոտներից է բարձր որակավորում ունեցող մասնագետների պակասը: Գիտակրթական բարեփոխումները նախատեսվում է սկսել դպրոցից: Առաջարկվում է որոշ արտոնություններ տրամադրել հատկապես գյուղական համայնքներում աշխատող ուսուցիչներին՝ նրանց համար ապահովելով աշխատանքային բարենպաստ պայմաններ: Վերջին տասնամյակում Լատվիայի կառավարությունը մեծ առաջընթաց է ապահովել մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում, որը ներառում է աշխատանքային նոր ստանդարտների և դրանց համապատաս-

խան մասնագիտությունների և մոդուլային ծրագրերի մշակում:

Գյուղատնտեսությունը Լատվիայի ազգային տնտեսության գերակա ոլորտներից է, ինչպես և Հայաստանում:

Հենվելով Լատվիայի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների վրա՝ առաջարկում ենք.

✓ ՀՀ-ում մշակել ներդրումային ծրագրերի ռազմավարություն՝ «POLARIS»-ի սկզբունքներով:

✓ Համալսարաններում և գիտահետազոտական ինստիտուտներում հիմնել հատուկ «գրասենյակներ», որտեղ ձեռնարկատերերը կներկայացնեն լուծում պահանջող իրենց խնդիրները, իսկ ուսանողները և գիտաշխատողները՝ վճարովի հիմունքներով կտրամադրեն դրանց լուծման իրենց տարբերակները:

✓ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք հիմնել վնաս գնահատողների անկախ կառույց, ագրոապահովագրական պետական ընկերություն, տրամադրել մասնագիտական խորհրդատվություն գյուղացիական տնտեսություններին և այլն:

✓ ՀՀ ագրարային ոլորտի զարգացման պետական քաղաքականության հիմնական ուղղություններ դիտարկել հետևյալները.

- ագրարային ոլորտում գյուղատնտեսական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում և մասնագիտական խորհրդատվության տրամադրում,

- տնտեսվարողների և վերամշակողների միջև պայմանագրային սերտ հարաբերությունների ձևավորում,

- ագրարային ոլորտում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորում,

- գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացման համար արտադրամասերի տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացում, գյուղական համայնքների ենթակառուցվածքների բարելավում:

ԿԱՆԱԴԱ

Գոհար Ոսկանյան

Գյուղատնտեսությունը Կանադայի տնտեսության հիմնական շարժիչ ուժն է: Ներկայում համեմատաբար շատ են մշակվում նոր մշակաբույսեր, որոնցից է մի շարք բարելավված սորտերից ստացված կանոլան: Ժամանակի ընթացքում Կանադայի ֆերմերների քանակը նվազել է, ինչը բացատրվում է տեխնոլոգիական առաջընթացի, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական գործունեության հնարավորությունների աճով: Մեկ գյուղացիական տնտեսության միջին չափը 295 հա է, նվազագույնը՝ 100 հա, առավելագույնը՝ 600 հա: Տեխնոլոգիական առաջընթացն է, որ վերջին 200 տարվա ընթացքում ամբողջությամբ վերափոխել է գյուղատնտեսության ոլորտը: Կանադայում նորարարությունը և հետազոտությունները խրախուսելու համար ֆեդերալ կառավարությունն ապահովում է գիտության վրա հիմնված օրենսդրական և կարգավորման շրջանակ, որպեսզի նպաստի նոր պրոդուկտների ներմուծմանը կամ նոր մեթոդների մշակմանը:

Կանադայի գյուղատնտեսության առանձնահատկություններից մեկն այն է, որ ֆերմերները, բացի գյուղատնտեսական գործունեությունից, զբաղված են այլ ոլորտներում ևս, որոնք բաժանվում են երեք խմբի.

1. արտագյուղատնտեսական զբաղվածություն,

2. ավելացված արժեքի գործունեություն,

3. ոչ գյուղատնտեսական բիզնես:

Կատարված ուսումնասիրությունները հիմք են տալիս անելու հետևյալ առաջարկությունները, որոնք կիրառելի կլինեն հայաստանյան ներկայիս պայմաններում:

1. Հաշվի առնելով ՀՀ գյուղացիական տնտեսությունների հողակտորների միջին չափը (1.4հա) և Կանադայում մեկ ֆերմերին բաժին ընկնող միջին հողակտորի չափը (295հա)՝ միանշանակ անհրաժեշտ է էլ ավելի ակտիվ և գործուն քայլեր կատարել հողերի խոշորացման ուղղությամբ: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ ՀՀ-ն, ի տարբերություն Կանադայի, տարածքի մեծությամբ դասվում է փոքր պետությունների շարքում, սակայն այստեղ ձևավորվել է շուրջ 340 000 գյուղացիական տնտեսություն, մինչդեռ Կանադայի նման խոշոր երկրում գործում է

200 000-ից էլ քիչ ֆերմեր: ՀՀ-ում գյուղատնտեսական հողերի խոշորացումը միայն հիմք կարող է հանդիսանալ գյուղատնտեսության զարգացման համար:

2. ՀՀ-ում գյուղատնտեսության վարումը պետք է իրականացվի նորագույն տեխնոլոգիաների և նորարարական մեթոդների կիրառմամբ: Հակառակ դեպքում բարդ կլինի խոսել զարգացած գյուղի և գյուղատնտեսության մասին:

3. Ապահովել համապատասխան միջավայր (ենթակառուցվածքներ, իրավաօրենսդրական դաշտ, պետական աջակցության ծրագրեր և այլն), որը կնպաստի գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական գործունեության տարածմանն ու զարգացմանը:

4. Տարվա մեջ մեկ օր սահմանել և նշել որպես «Հայաստանի գյուղատնտեսության օր»: Այս միջոցառումը կօգնի էլ ավելի արժևորելու գյուղն ու գյուղատնտեսական գործունեությանը զբաղվող մարդկանց և նրանց աշխատանքը: Այն հնարավորություն կտա ազգաբնակչության շրջանում փոխելու վերաբերմունքը և պատկերացումները ագրարային ոլորտի վերաբերյալ, իսկ գյուղացիական տնտեսությունները կլինեն ավելի գնահատված և մոտիվացված:

5. Գյուղական համայնքներում ստեղծել գործակալություններ, որոնք կնպաստեն նորարարական գաղափարների իրականացմանը և ոչ գյուղատնտեսական գործունեության տարածմանն ու զարգացմանը:

ԿԻՊՐՈՍ

Արմինե Զախարյան

Ինչպես հայտնի է, Կիպրոսի տնտեսությունը լուրջ անկում ապրեց 1974 թ.-ն թուրքական ներխուժումից հետո: Կղզու ֆինանսատնտեսական առաջընթացը կտրուկ կանգ առավ: Երկրի եկամուտները գործնականում իջել էին զրոյական մակարդակի: 1975թ.-ին ճգնաժամի հաղթահարման նպատակով մշակվեց տնտեսական գործունեության երկամյա արտակարգ ծրագիր, որի նպատակն էր պայմաններ ստեղծել ինչպես ինքնաբավ տնտեսական զարգացման, այնպես էլ տնտեսության զարգացման նախաճգնաժամային մակարդակի նվաճման համար: Վերջինս ենթադրվում էր իրականացնել Կիպրոսի վերահսկողության ներքո գտնվող տարածքներում առկա ռեսուրսների ակտիվ և ռացիոնալ օգտագործման միջոցով:

Հայաստանը և Կիպրոսն ունեն պատմական, աշխարհաքաղաքական և մշակութային որոշակի ընդհանրություններ, ինչի շնորհիվ երկու երկրների միջև բարեկամական և համա-

գործակցային կապերի խորացումն ու ամրապնդումը լուրջ ջանքերի գործադրում չի պահանջում: Հատկապես այն պարագայում, երբ կիպրոսցիները 1974թ.-ին, իսկ հայերը ներկայում հայտնվել են միևնույն ճգնաժամային իրավիճակում՝ թուրքական ներխուժման արդյունքում: Հետևաբար՝ Կիպրոսում իրականացված հակաճգնաժամային միջոցառումները կիրառելի են նաև Հայաստանում:

Ուստի, հաշվի առնելով Կիպրոսի տնտեսության զարգացման ներկայացված փորձը, կարող ենք առաջարկել ՀՀ տնտեսական վիճակի բարելավման հետևյալ ուղիները.

- պետական-մասնավոր համագործակցության ակտիվացում՝ ունեցած ներուժի համատեղ և արդյունավետ օգտագործման նպատակով:

- Ինովացիոն և ներդրումային գործունեության խթանման նպատակով ընկերություններին հարկային, մաքսային և վարկային արտոնությունների տրամադրում:

- Բարձր տեխնոլոգիական ոլորտի արտադրանքի արտահանման (վաճառահանման) և փոխանակման համար բարենպաստ պայմանների ստեղծում, ինչպես նաև ընկերությունների

ինովացիոն զարգացման խթանում՝ բարձր տեխնոլոգիական ոլորտի արտադրանքի և տեխնոլոգիական լուծումների օգտագործման շեշտադրմամբ:

- Հայրենական և օտարերկրյա ներդրողների համար կապիտալի ներդրման հավասար և գրավիչ պայմանների ապահովում, կասկածելի կամ ոչ բարեկամական երկրների կապիտալների ներդրման գործընթացների կասեցում կամ խիստ վերահսկողություն:

- Սոցիալապես անապահով քաղաքացիների զբաղվածության ապահովման և մասնագիտական վերապատրաստման գործընթացներում Կիպրոսի առաջավոր փորձի կիրառում՝ թեթև, սննդի և վերամշակող արդյունաբերության ոլորտներում լրացուցիչ ներդրումների իրականացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում և դրանց համալրում:

- Բնակարանաշինության և բնակարանային ապահովության աշխատանքներում շահառուների ակտիվ ներգրավում՝ զբաղվածության ապահովման և շինարարական աշխատանքների տևողության կրճատման նպատակով:

- Բնակչության կենսամակարդակի բարե-

լավմանը և տնտեսության համաչափ զարգացմանն ուղղված տնտեսական զարգացման և սոցիալական քաղաքականության փոխհամաձայնեցված ներդաշնակ մոդելի մշակում և կիրառում:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ

Արմինե Զախարյան

Համաշխարհային տնտեսական պրակտիկայում Հարավային Կորեան հայտնի է որպես «ասիական տնտեսական վագր»:

Կորեայի տնտեսական զարգացմանը հատկապես նպաստել են հետևյալ հանգամանքները.

- ծանր արդյունաբերության արագընթաց զարգացումը գյուղատնտեսության վերակառուցման հաշվին,

- արտահանման խթանումը և նրա պետական կարգավորումը,

- տնտեսության պետական կոշտ կառավարումը,

- պետական պլանավորումը,

- բանկային համակարգի և տրանսպորտի ազգայնացումը,

- խոշոր արդյունաբերական խմբերի զարգացման պետական խթանումը՝ դրանց ստեղծումը ոչ թե մասնավորեցման ճանապարհով, այլ «գրոյից» նոր հիմնադրումը,

- ԱՄՆ-ի հետ բարեկամական հարաբերությունների հաստատումը աշխարհաքաղաքական շահերի ընդհանրության հիման վրա:

Հաշվի առնելով Հարավային Կորեայի տնտեսության արագընթաց զարգացման ներկայացված փորձը՝ կարող ենք առաջարկել ՀՀ տնտեսական վիճակի բարելավման հետևյալ ուղիները.

- Ինժեներական կրթության ֆինանսավորման ծավալների ավելացման միջոցով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների թվաքանակի ավելացումը:

- Արտահանման կողմնորոշում ունեցող թեթև արդյունաբերության զարգացման խթանումը:

- Ռազմաարդյունաբերության ինովացիոն զարգացման խթանումը պետական պատվերի ապահովման միջոցով:

- Զբաղվածության վիճակի բարելավման նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել որոշակի մասնագիտությունների հանդեպ աշխատաշուկայում առկա պահանջարկը և դրան համապատասխան ավելացնել կամ պակասեցնել տվյալ մասնագիտությունների գծով ուսումնական հաստատություններում առկա ուսուցման տեղերը:

- Պետության և խոշոր բիզնեսի միջև արդյունավետ համագործակցության հաստատումը և դրանց ակտիվ ներգրավումը տնտեսական հիմնախնդիրների լուծման գործընթացում:

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Գրիգոր Մանուկյան

Շնորհիվ Հնդկաստանում իրականացված տնտեսական բարեփոխումների՝ տնտեսությունը կայուն աճում է ավելի քան 40 տարի:

Հնդկաստանի տնտեսական առաջընթացին նպաստել են.

1. հնդկական այլընտրանքային մոդելի ձևավորումը. «արտաքին աճի» ուղղությունը խոշոր և միջին արդյունաբերության զարգացումն է, իսկ «ներքին աճինը»՝ միկրոարտադրությունը:

2. Սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության բանալին տնտեսության վրա պետության ազդեցության պլանավորումն է:

3. Աշխարհում ամենամեծ համագործակցային տնտեսության ձևավորումը: Հնդկաստանի յուրաքանչյուր հինգերորդ քաղաքացի կոոպերատիվի անդամ է:

4. Առավելագույն զբաղվածության ապահովումը փոքր արդյունաբերությամբ:

5. Հնդկաստանի ավանդական և ժամանակակից տնտեսությունը:

6. Հնդկական արտահանողներին աջակցությունը:

7. Կախված տնտեսության ոլորտից՝ օտարերկրյա ներդրումների ընդունման պայմանները (ավտոմատ ռեժիմ կամ համապատասխան պետական մարմինների հաստատման անցնելու անհրաժեշտություն):

8. Առևտրային բանկերի ֆինանսական հոսքերի ակտիվորեն կարգավորումը:

9. Գիտական և տեխնոլոգիական ներուժի աճը և ծառայությունների ոլորտի արագ զարգացումը:

10. Ազգային տնտեսության արագ ինտեգրումը միջազգային համագործակցություններում:

11. Կրթության նկատմամբ հարգանքը՝ որպես հնդկական քաղաքակրթության ավանդույթ:

12. Ռեգիոնների զարգացումը ներսից:

13. «Ծառայության» ոլորտի ակտիվ զարգացման վրա հիմնվելը:

14. Հասարակական-քաղաքական ընդհանուր իրավիճակի կայունությունը:

Կարծում եմ՝ Հնդկաստանում իրականացված տնտեսական բարեփոխումների մի մասը կարող է կիրարկվել ՀՀ տնտեսությունում:

1. Երկրում սեփական արդյունաբերական և տեխնիկական բազայի ստեղծումից հետո անցնել արտահանմանն ուղղված զարգացման մոդելի:

2. Սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության մշակման և միջոցների նպատակային օգտագործման ապահովման գործունե կարևորել պետության ազդեցության պլանավորումը:

3. Տնտեսության պետական և մասնավոր հատվածների դերն ու տեղը պետք է որոշվեն յուրաքանչյուր փուլում:

4. Առավելագույն զբաղվածության ապահովում փոքր արդյունաբերությամբ:

5. Տեքստիլ արդյունաբերությանն աջակցելու քաղաքականությունը պետք է ներառի.

- տեխնիկական վերազինման ֆինանսավորում, որն արտադրողներին ֆինանսական աջակցություն է ցուցաբերում՝ պետական փոխհատուցումների և սուբսիդիաների միջոցով արտադրությունն արդիականացնելու համար:

- Տեքստիլ տեխնոլոգիական արդյունաբերական պարկերի ստեղծման ծրագիր, որտեղ կառավարությունը պետք է իրականացնի կազմակերպական և իրավական բոլոր միջոցառումները:

6. Արտահանողներին աջակցությունը.
մասնավորապես.

- սահմանել ապրանքների և ծառայությունների ցանկը, որոնք աջակցություն են ստանում որոշակի երկրների շուկաներ արտահանվելիս:

- Պետության աջակցությունը պետք է վերաբերի հատուկ ապրանքների: Փոխհատուցման ամենաբարձր առաջնահերթությունն ու առավելագույն տոկոսը տալ գյուղատնտեսական և էկոլոգիական, բարձր հավելյալ արժեք ունեցող, հիմնական արդյունաբերական և բարձր տեխնոլոգիական արտադրանքին:

- Հատուկ ծրագրեր մշակել ոսկերչական արդյունաբերության, ինչպես նաև «արտահանման» տների («экспортные» дома) համար:

- Արտահանմանն օժանդակելու գործում կարևորել «Արտահանման վարկի երաշխիքներ տրամադրող կորպորացիաները», որոնք արտահանողներին տրամադրում են տարատեսակ ապահովագրական ծածկույթ:

7. Օտարերկրյա ուղղակի ներդրումները նպատակահարմար է իրականացնել համատեղ ձեռնարկությունների ձևավորմամբ:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Արմինե Ջախարյան

2001թ.-ին Հունաստանի անդամակցությունը Եվրոպական արժույթային միությանն ունեցավ երկակի հետևանքներ. մի կողմից խթան հանդիսացավ տնտեսական աճի համար, մյուս կողմից սրեց շատ հին խնդիրները: Երկիրն ունեցավ հսկայական արտաքին պարտք և առևտրային հաշվեկշռի աճող դեֆիցիտ:

2010-2011թթ.-ին Հունաստանի տնտեսությունը հայտնվեց ճգնաժամի մեջ: Համախառն պարտքը 2010 թվականի մարտի վերջին հասավ 300 միլիարդ եվրոյի: Բյուջեի դեֆիցիտը նույնպես զգալի էր՝ 12,7%: Կառավարության կողմից մշակված հակաճգնաժամային միջոցառումների փաթեթը ներառում էր քաղծառայողների աշխատավարձերի կրճատումը, սպառողական հարկերի բարձրացումը և կենսաթոշակների աճի կասեցումը: Ստեղծված իրավիճակում Եվրագոտու երկրները Հունաստանին տրամադրեցին մի շարք երկկողմ վարկեր՝ ԱՄՆ-ի վարկերի հետ մեկտեղ:

Ժամանակակից Հունաստանի տնտեսության ուժեղ կողմն այն է, որ երկիրը եվրոպական ամենակարևոր տուրիստական կենտրոններից մեկն է: Բացի այդ, Հունաստանն արտահանում է մեծ քանակությամբ գյուղատնտեսական արտադրանք, իսկ բեռնափոխադրող ընկերություններն ունեն աշխարհում ամենամեծ առևտրային ծովային նավատորմը: Հունաստանի տնտեսության թույլ կողմերն են խոշոր պետական պարտքերը, բարձր վարկային տոկոսադրույքները, աշխատատեղերի անբավարար քանակը և սովերային տնտեսության առկայությունը:

Ինչպես հայտնի է, Հայաստանի և Հունաստանի հարաբերությունները հիմնված են պատմական բարեկամության վրա: Փոխշահավետ համագործակցության ընդլայնման հավանական առաջնային ոլորտը տուրիզմն է: Վերջին տարիներին Հունաստան մեկնող հայ զբոսաշրջիկների և Հայաստան ժամանող հույն զբոսաշրջիկների թիվը զգալիորեն աճել է, ինչին հատկապես նպաստել են մեր երկրների միջև ուղիղ օդային կանոնավոր հաղորդակցության վերականգնումն ու չարտերային թռիչքների իրականացումը:

Հաշվի առնելով Հունաստանի փորձը առա-

ջարկում ենք.

- հայրենական և օտարերկրյա ներդրողների համար հավասար և գրավիչ հարկային գործիքակազմի մշակում և կիրառում, որոշակի պայմաններում և ժամանակահատվածում հարկային դրույքաչափերի նվազեցման հնարավորության ապահովում:

- Ինովացիոն և ներդրումային գործունեության ֆինանսավորման մատչելիության ապահովում արտոնյալ վարկավորման և անհատույց պետական ֆինանսավորման միջոցով:

- Կրթության և գիտության ոլորտներում հայ-հունական համագործակցության ակտիվացում՝ մրցունակ մասնագիտական կադրերի պատրաստման, ինովացիոն արտադրանքի, տեխնոլոգիայի և տեխնոլոգիական լուծումների արդյունավետ փոխանակման նպատակով:

- Տնտեսության տարբեր ոլորտներում (հանքարդյունաբերություն, էներգետիկա, ռազմարդյունաբերություն, մետաղագործություն, քիմիական արդյունաբերություն, թեթև և սննդի արդյունաբերություն, գյուղատնտեսություն, վերամշակող արդյունաբերություն, զբոսաշրջություն և այլն) հայ-հունական համատեղ մասնավոր, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների հիմնադրում:

- Հայ-հունական համատեղ մշակութային միջոցառումների և փոխադարձ այցելությունների կազմակերպում՝ երկու երկրներում զբոսաշրջության զարգացման խթանման նպատակով:

- Զբոսաշրջության ոլորտում լրացուցիչ ներդրումների իրականացման միջոցով զբոսաշրջային մասնավոր այցերի վերափոխում ընտանեկանի, ինչը մեծապես կնպաստի զբոսաշրջային ավելի ընդգրկուն հոսքերի ապահովմանը:

Ամփոփելով անհրաժեշտ է նշել, որ Հունաստանի տնտեսության զարգացման դիտարկված փորձի և հողվածում ներկայացված գործնական առաջարկությունների կիրառումը կարող է նպաստել ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների արդյունավետ զարգացմանը, ներդրումների ծավալների ավելացմանը, ընկերությունների ինովացիոն գործունեության խթանմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, ինչպես նաև արտաքին տնտեսական և քաղաքական կապերի ամրապնդմանը:

ՃԱՊՈՆԻԱ

Սվետլանա Դալլաքյան

Մեր նպատակն է ներկայացնել «Ճապոնական հրաշքի» փիլիսոփայությունը և սկզբունքային մոտեցումները՝ կապված ֆինանսատնտեսական լծակների, ճապոնական մենեջմենթի, ինչպես նաև էթնոմշակութային առանձնահատկությունների հետ, և դրանք որոշ ուղղություններով ծառայեցնել Հայաստանում տնտեսական հրաշքի գործարկմանը:

Մեր դիտարկմամբ «Ճապոնական տնտեսական հրաշքը» կարող ենք ներկայացնել բուրգի տեսքով, որը կազմված է հետևյալ մակարդակներից.

1. էթնոմշակութային գործոններ (խմբայնություն, ավանդական ընտանիք),

2. Ճապոնական մենեջմենթ (խմբին նվիրվածություն, որոշումների կայացում, կորպորատիվ ոգի և կառավարում),

3. ֆինանսատնտեսական գործիքներ (ներդրումային, հարկային, դրամավարկային քաղաքականություն):

Ճապոնացիների էթնիկական ինքնության կարևոր շերտը խմբային ինքնությունն է, ինչը կապված է հենց Ճապոնական ավանդական ընտանիքի հետ:

Ճապոնական մենեջմենթի հիմնական առանձնահատկություններից մեկը խմբին նվիրվածությունը շեշտելն է, խմբային հոգեբանությունը: Մարդկանց ոչ մի հանրության մեջ, թերևս, այնպես բարձր չեն գնահատում խմբային մթնոլորտը, խմբի հոգեբանական կլիման, ինչպես Ճապոնիայում: Աշխատանքի արտադրողականության բարձրացումը կամ անկումը շաղկապվում է աշխատանքային խմբի համերաշխության աստիճանի և նրա «անսայթաք» գործունեության հետ: Խմբին նվիրվածության գաղափարախոսությունը փոխադրվում է դեպի ցանկացած Ճապոնական ընկերություն և կիրառվում Ճապոնական մենեջմենթում, դառնում անձնակազմի աշխատանքային ջանքերի ուժեղագույն խթանիչը, ջանքեր, որոնց կարևորագույն նպատակն է ամրապնդել ֆիրմայի ներկա դիրքերը և պատրաստվել ապագայում նոր դիրքեր գրավելուն: Ճապոնական մենեջմենթի կարևորագույն բաղադրամասերից է որոշումների կայացման գործընթացը: Որոշումներ ընդունելու Ճապոնական համակարգը հիմնված է ազ-

գային ավանդույթների վրա, արտացոլում է ճապոնացիների ազգային հոգեբանության առանձնահատկությունները և կողմնորոշված է դեպի նրանց սոցիալական արժեքները¹:

Ճապոնիայում որոշումներ կայացնելու էական առանձնահատկությունը համաձայնեցման սկզբունքն է: Ճապոնացիները նախընտրում են նախնական համաձայնեցումները, խորհրդակցությունները և ոչ ձևական բանակցությունները:

Ֆինանսատնտեսական գործոններն առավել լավ պատկերացնելու համար ներկայացնենք «Ճապոնական հրաշքի» իրագործմանը նպաստող «ֆինանսական բանաձև», որը կարող է արտահայտվել հետևյալ տրամաբանական շղթայով².

խնայողությունների և կուտակումների բարձր մակարդակ → մասշտաբային ներդրումներ առավել կապիտալատար ճյուղերում (պետության ընտրությամբ առավել հեռանկարային ճյուղեր) → մակրոտնտեսական կայունություն (ինֆլյացիոն ցածր տեմպ կամ բացակայություն (մինչև 1965 թ.)/ պետական բյուջեի դեֆիցիտի ցածր մակարդակ) → ազգային արժույթի

¹ Поршнев Б.Ф., Социальная психология и история.-М., 1979, стр. 68.

² Финансовые стратегии модернизации экономики: мировая практика / под ред. Я. М. Миркина. М.: Магистр, 2014, стр. 63-64.

Ֆիքսված իջեցված կուրս՝ նպաստող ներմուծման փոխարինմանը և արտահանման զարգացմանը → տեխնոլոգիաների ներմուծման խրախուսման դեպքում օտարերկրյա կապիտալի սահմանափակում → արտահանմանը պետական օժանդակություն → կապիտալի հաշվեկշռի վերահսկողություն և դրա աստիճանական ազատականացում → տնտեսության լայնածավալ հարկային խրախուսում → բանկային համակարգի վերահսկողություն:

«Ճապոնական տնտեսական հրաշքից» Հայաստանի տնտեսության զարգացման համար գործածական կարող են լինել.

1. Ճապոնացիների նվիրվածությունը, ինչի շնորհիվ էլ պետական կամ ազգային նպատակներին հասնելու համար ճապոնացիները գոհում են անձնական շահը հանուն խմբի, պետության կամ ազգի,

2. որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի կիրառումը,

3. «Ճապոնական հրաշքի» կարևորագույն գործոններից մեկն էլ բնակչության խնայողությունների նպատակային օգտագործումն էր, առաջարկում ենք ՀՀ բնակչությանը՝ կատարել խնայողություններ:

ՄԱԼԱՅՁԻԱ

Քրիստինե Բաղդասարյան

Մալայզիայի տնտեսական հրաշքի ուղին ամենահետաքրքիրը և ուսանելիներից մեկն է աշխարհում: Դրա հիմքում ընկած էր այսպես կոչված «կորպորատիվ ազգայնականության» գաղափարը՝ տնտեսության բարձր տեխնոլոգիական ոլորտներում կորպորացիաների ստեղծումը: Նման կորպորացիաների համար այս փուլում առաջնայինը ոչ թե եկամուտն էր, այլ ամբողջ հասարակության շահի և բարգավաճման ուղղությամբ աշխատանքը: Պետությունն, իր հերթին հանդես էր գալիս ոչ թե որպես ղեկավար, այլ որպես հավասար գործընկեր: Այս ամենի արդյունքում երկիրը վառելիքաէներգետիկ և գյուղատնտեսական հումքի մատակարարից վերածվեց արագ զարգացող արդյունաբերական պետության:

Որպես թիրախ ընտրվեց մի քանի հիմնական ուղղություն, և դրանց շուրջ սկսեցին պատվել բոլոր մյուս բարեփոխումները.

- բնակչության շրջանում աղքատության վերացում՝ անկախ ազգային պատկանելությունից և ռասայից,

- տնտեսական գործունեության որոշակի ոլորտներում ռասայական մենաշնորհի վերացում, քանի որ երկար ժամանակ առևտրի ոլորտի գերակշիռ մասը Մալայզիայի չինական համայնքի ձեռքում էր, մինչդեռ մալայացիները պատմականորեն զբաղված էին գյուղատնտեսության ոլորտում,

- տնտեսական մշակույթի վերափոխում, որն ուղղված էր առևտրի և տեխնոլոգիաների բնագավառներում նոր հմտությունների ձեռքբերմանը,

- նոր մոտեցումների և արժեքների յուրացում:

Նոր տնտեսական քաղաքականությունը նախատեսում էր տնտեսության վերակազմավորում՝ ազգային հարստության առավել համաչափ բաշխվածության հասնելու համար:

Մալայզիան հումքի արդյունահանման և արտահանման վրա հիմնված տնտեսություն ունեցող երկրից վերածվեց առաջընթաց տեմպերով զարգացող պետության, որտեղ արդյունաբերության և ծառայությունների ոլորտի բաժինը ՀՆԱ-ում կազմում է 90 %: Այսօր արդյու-

նաբերական ապրանքների մասնաբաժինն ընդհանուր արտահանման 85 %-ն է: Մալայզիայում շահագործվող ավտոմեքենաների 80 %-ը տեղական արտադրության է:

Մահմանազատվեցին կրոնն ու քաղաքականությունը, որի շնորհիվ, ժամանակակից ձեռքբերումներին, տնտեսական աճին և բարձր կենսամակարդակին զուգահեռ, մալայզիական հասարակությանը հաջողվել է պահպանել իր կրոնական ու մշակութային ավանդույթները:

Ըստ էության ուսանելի է մալայզիական տնտեսության արդյունաբերականացման նոր տնտեսական քաղաքականության գործարկման մոդելը, որի իրականացումը նախատեսում է ապահովել ներմուծման ուղղվածությունից անցում դեպի արտահանման ուղղվածություն ունեցող արտադրություն: Այն ուղղված է նաև քաղաքային և գյուղական համայնքներում սոցիալական և տնտեսական զարգացման ընդլայնմանը և ֆինանսական համահարթեցմանը:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի գիտության և տեխնոլոգիաների ոլորտում նորարարությունների հետևողական քաղաքականությունը: Ինչպես Մալայզիայում, այնպես էլ, ակնկալվում է, նաև ՀՀ-ում, ռազմավարությունների և ծրագրերի մշակողները լավատեղյակ են

տնտեսության փոխակերպման նոր հնարավորություններին, մասնավորապես տնտեսության անցմանը արդյունաբերականից դեպի տեղեկատվական տնտեսություն կամ նորամուծական տնտեսության զարգացում: Այդ փոխակերպումը հաջողվում է միայն այն ժամանակ, երբ այս գործընթացում ներգրավված են լինում բոլոր ստեղծարար ուժերը՝ պետությունը, հանրային (հասարակական) և ոչ պետական (ոչ կառավարական) ոլորտները, ինչպես նաև սոցիալական բոլոր շերտերի ստեղծագործական մասը:

ՆՈՐՎԵԳԻԱ

Ստեփան Պապիկյան

Համեմատական վերլուծության եղանակով կարելի է հանգել այն եզրակացության, որ Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների զարգացման համար Նորվեգիայի տնտեսության զարգացման մարտավարությունը և ռազմավարությունը կարող են օրինակելի լինել:

Առաջարկվում է ՀՀ հիդրոէներգետիկայի ոլորտում կառավարման արդյունավետ համակարգ, որի դեպքում խելացի կօգտագործվեն առկա ջրային ռեսուրսները՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, ջրի հիդրոլոգիական ռեժիմները, բուսական և կենդանական աշխարհի վրա բացասական փաստացի ազդեցությունները և այլն: Ստեղծել պետության մասնակցությամբ խառը տիպի էներգետիկական ընկերություններ՝ զարգացնելով բաժնետիրական ընկերություններ:

Նորվեգիայի բոլոր բնական ռեսուրսները պետական սեփականություն են: Պետությունը շնորհում է հանքարդյունաբերության ժամանակավոր արտոնագրեր: Նրան են պատկանում

նաև հետևյալ ոլորտների ամենամեծ բաժնետոմսերը՝ նավթի և գազի արտադրություն, հիդրոէներգետիկա, բանկային գործունեություն, հեռահաղորդակցություն:

Հիդրոէլեկտրակայանն իսկապես Նորվեգիայի էներգիայի հիմքն է և երկրի էներգետիկ անվտանգության առանցքային տարրը: Ուստի զարմանալի չէ, որ էներգետիկ քաղաքականություն վարելու գործընթացում պետությունն ամեն կերպ վերահսկում է հիդրոէներգետիկան և փորձում կանխել օտարերկրյա ընկերությունների մուտքը այնտեղ: Նորվեգական շուկայում էլեկտրաէներգիա վաճառելու լիցենզիա են ստացել միայն մի քանի արտասահմանյան ընկերություններ: Մինչ օրս օտարերկրյա բաժնետերերի աննշան թիվ է նշվում նաև քամու էներգիայի ոլորտում: 2015թ.-ի համեմատ 2020թ.-ին զգալիորեն ավելացել է Նորվեգիայի էլեկտրաէներգիայի արտահանումը՝ կազմելով 25.0 մլրդ ԿՎտժ:

Նորվեգիայի հիդրոէներգետիկայի արդյունաբերության իրավական կարգավորման առանձնահատկություններից մեկը պետության՝ միաժամանակ տրված էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիաներին հոգուտ իրեն տրված կանոնն է (անգլերեն՝ պետությանը վերադարձի

իրավունք): Նորմը կիրառվում է 1917 թվականից մասնավոր ընկերություններին տրված այս տեսակի լիցենզիաների նկատմամբ: Այս օրենսդրական դրույթի ուժով էլեկտրաէներգիայի արտադրության աղբյուրների նկատմամբ բոլոր իրավունքներն ավտոմատ և անվճար փոխանցվում են պետությանը՝ լիցենզիաների ժամկետը լրանալուց հետո: Լիցենզիաների ժամկետը լրանալուց հետո արտադրող սարքավորումները կամ վաճառվում են նորվեգական հանրային ընկերությանը, կամ դառնում են պետության անմիջական սեփականությունը:

Նորվեգիայում միջուկային էներգիա չկա: Այնուամենայնիվ, երկրի օրենսդրությունը թողնում է ատոմակայաններ կառուցելու հնարավորությունը: 2000-ականներից սկսած՝ ատոմային էներգիայի օգտագործման գաղափարը լրջորեն քննարկվել և աջակցություն է ստացել երկրի արդյունաբերության ղեկավարների մեծ մասի կողմից: Քամու էլեկտրակայանները լայն տարածում են ստանում:

Նորվեգիայում զարգացած են նաև խառը ընկերությունները: Բազմաթիվ մասնավոր ընկերություններում պետական արժեթղթերի բաժինը մոտ 50 տոկոս է:

Շնող և Լոռի բերդ հէկ-երի նախագծման և կառուցման պարագայում տարեկան կարող ենք արտադրել ավելի քան 500 միլիոն ԿՎտժ էլեկտրական էներգիա: Նպատակին կարող ենք հասնել պետության մասնակցությամբ բաժնետիրական ընկերություն ունենալու դեպքում: Աստիճանաբար կձևավորվի միջին խավ, և տնտեսության այս ճյուղը կսկսի աստիճանաբար զարգանալ:

ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ

Եվգենյա Հակոբյան

1980-ականներին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրների մեջ Նոր Զելանդիան համարվում էր «Վատ տնտեսությամբ» երկիր: Արտադրության աճի մակարդակը, արտահանման ծավալներն այստեղ ամենացածրն էին: Գրանցվել էին ինչպես պետական, այնպես էլ արտաքին պարտքի, բյուջեի դեֆիցիտի, ինչպես նաև գործազրկության ամենաբարձր ցուցանիշները: Կառավարությունը հաճախ բախվում էր բյուջետային դեֆիցիտի խնդրին. գանձվող հարկերը չէին ծածկում պետական ծախսերը:

Երկրում կատարվող տնտեսական բարեփոխումները սկիզբ առան 1984 թվականին, և գրեթե տասը տարվա ընթացքում երկրի տնտեսությունը ձևափոխվեց: Նոր կառավարությունը ներդրեց ավելացված արժեքի (GST) հարկի համահարթեցված դրույքաչափ գրեթե բոլոր ապրանքների և ծառայությունների համար: Դա փոխարինեց տարբեր ապրանքների վաճառքի համար տարբեր դրույքաչափերով գոյություն ունեցող հար-

կին, իսկ եկամտահարկի սահմանային դրույքաչափերը զգալիորեն նվազեցին: Այնուհետև կառավարությունն ընդունեց հարկային պատասխանատվության մասին օրենքը (1994 թ.), որը պարտադրում էր կառավարությանը համապետական ընտրություններից առաջ հրապարակել տնտեսական և հարկային ամբողջական ցուցանիշները՝ նպատակ ունենալով կանխարգելելու անպատասխանատու հարկային քաղաքականության վարումը: Կառավարությունն արմատական բարեփոխումներ սկսեց նաև պետական ծախսերի կրճատման ուղղությամբ: Մոցիալական նպաստները կրճատվեցին, որոշ դեպքերում չեղարկվեցին և սկսեցին կրել ավելի նպատակային բնույթ: Լայնածավալ բարեփոխումներ սկսվեցին նաև Նոր Զելանդիայի գյուղատնտեսության ոլորտում: Երկիրը հրաժարվեց գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին սուբսիդավորումից և ձեռնարկեց գյուղատնտեսական եզակի բարեփոխում, որի նպատակն էր ստեղծել ազատ շուկայի մեխանիզմներ: Պետությունը հատկապես աջակցություն տրամադրեց գյուղատնտեսության ոլորտում գիտական հետազոտությունների անցկացմանը, ենթակառուցվածքների կատարելագործմանը և տնտեսությունների զարգացմանը: Բարեփոխումների շնորհիվ երկրում

ձևավորվեց գյուղատնտեսական հատուկ մեխանիզմ, որն արագորեն հարմարվեց նոր ռեժիմին (առանց սուբսիդիաների, ազատ գնագոյացման) և պահպանեց շահութաբերության բավական բարձր մակարդակ: Ինչ վերաբերում է մեր երկրին, հարկ է նշել, որ այստեղ տրամադրվող գյուղատնտեսական վարկերը մասամբ օգտագործվում են ոչ նպատակային, և բացակայում է պատշաճ վերահսկողություն այդ միջոցների օգտագործման նկատմամբ: Ուստի, գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող սուբսիդիաների բնույթի փոփոխության անհրաժեշտություն է առաջանում :

Հայաստանի կառավարության ծրագրում առաջնահերթությունների մեջ նշված է նաև կոռուպցիայի դեմ պայքարը: Ուսումնասիրելով Նոր Զելանդիայի փորձը՝ կարծում ենք, որ այն արժանի է ընդօրինակման: Նոր Զելանդիայում կոռուպցիան զսպող գործոններից է պետական կառավարման մարմինների թափանցիկ գործունեությունը, ՁԼՄ-ների ազատությունը: Այստեղ կարևորվում է կադրային արդյունավետ քաղաքականության վարումը:

ՇՎԵԴԻԱ

Ատոմ Մարգարյան

Հոդվածի արդիականությունը: Շվեդիայի տնտեսական զարգացման մոդելի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է այդ երկրին բնորոշ տնտեսական և քաղաքական բարեփոխումների փորձի յուրահատկությունների և առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությամբ և այդ լույսի ներքո տնտեսական լայնամասշտաբ բարեփոխումներ իրականացնող երկրների, այդ թվում՝ և Հայաստանի Հանրապետությունում ընթացող տնտեսական վերափոխումների ոչ միանշանակ արդյունքների գնահատման ու վերաիմաստավորման, ինչպես նաև դրանց ճշգրտման նպատակահարմարությամբ:

Շվեդիայի տնտեսության զարգացման փորձի բազմաթիվ տարրեր հնարավոր է տեղայնացնել ու կիրառել Հայաստանի Հանրապետությունում: Այդ կիրառությունները հանգում են հետևյալին.

ա. իրականացվող տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների քաղաքականու-

թյան միջանկյալ արդյունքները մշտապես պետք է ճշգրտվեն և համադրվեն հասարակության մեջ ըստ եկամտի բաշխման համամասնությունների հետ, որոնց գնահատման հիմնական չափանիշը Զիննիի գործակիցն է:

բ. Տնտեսության տեխնոլոգիական արդիականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման հիմնական աղբյուրները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության հանքային հարստություններից ստացվող բարձր ռենտային եկամուտները և ռոյալթիները: Այդ նպատակով անհրաժեշտ է վերանայել ՀՀ հանքահումքային ոլորտի նկատմամբ վարվող ընդհանուր կարգավորումների և հարկային քաղաքականությունը:

գ. Շվեդիայի տնտեսական զարգացման փորձը հուշում է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումների քաղաքականության համար անհրաժեշտ ռեսուրսներն արտաքին պարտքի ավելացման հաշվին ունեն իրենց սահմանները, որոնք չեն կարող գերազանցել երկրի ՀՆԱ-ի 35-40 տոկոսը: Ելնելով այդ հանգամանքից՝ անհրաժեշտ է էապես նվազեցնել ՀՀ արտաքին պարտքի բեռը, բյուջեի պակասուրդի մնացյալ հատվածը լրացնել մի կողմից՝ պետական ներքին փոխառությունների

ավելացման, մյուս կողմից՝ պետական ծախսերի
որոշակի մասի (մասնավորապես պետական
սպարատի պահպանման գծով) կրճատման
միջոցով:

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Եվգենյա Հակոբյան

Շվեյցարիայի հաջողությունը, առաջին հերթին, պայմանավորված է իրական ժողովրդավարությամբ: Աշխարհի ոչ մի երկրում քաղաքացիները ձայնի այդքան իրավունք չունեն, ինչքան Շվեյցարիայում: Նրանք իրավունք ունեն լուծելու հարցերի մի ամբողջ խումբ՝ դատավորների ընտրությունից մինչև պետական պաշտոնյաների ընտրությունը: Շվեյցարիայում շատ զարգացած է փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Շվեյցարիայի փորձի ուսումնասիրության արդյունքում կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

1. Շվեյցարիայում գործազրկության մակարդակը բավականին ցածր է: Սա հիմնականում արդյունք է աշխատանքի նեղ մասնագիտացման: Այստեղ միջին մասնագիտական կրթություն ստացողների թիվը բավականին մեծ է: Դեռևս ուսումնառության տարիների ընթացքում ուսանողները պրակտիկա են անցնում իրենց ընտրած մասնագիտություններին համապատասխան գործունեություն վարող ձեռնարկություն-

ներում, ինչն էլ իր հերթին մեծացնում է հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը հետագայում գործազուրկ չմնալու առումով: Մեր հանրապետությունում արհեստակցական ուսումնարանները քիչ են: Երիտասարդների շրջանում հետաքրքրությունը միջին մասնագիտական կրթության նկատմամբ շատ ցածր է, քանի որ դրանց հեղինակությունն ու վակն էլ է ցածր: Կարծում եմ, որ պետք է ավելի մեծ ուշադրություն դարձվի միջին մասնագիտական կրթության զարգացմանը, քանի որ աշխատաշուկայում նման մասնագետների կարիքը մեծ է:

2. Շվեյցարիայում կրթության կազմակերպումը պետության խնդիրն է: Հատկանշական է այն փաստը, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող դասախոսներն ու ուսանողների մեծ մասը զբաղվում են գիտությամբ, իսկ շվեյցարական բուհերին կից գործում է գիտահետազոտական գործունեության արդյունքների առևտրայնացման հատուկ կենտրոն: Կարծում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է հետևի Շվեյցարիայի օրինակին՝ բարձրացնելով գիտության և կրթության ֆինանսավորումը, երկիրն ավելի գրավիչ դարձնելով գիտությամբ զբաղվելու համար և բարձրացնելով կրթական

մակարդակը: Ճիշտ է, Հայաստանը չենք կարող համեմատել Շվեյցարիայի նման զարգացած երկրի հետ՝ կրթությանն ու գիտությանն ուղղված միջոցների քանակով, սակայն պետք է այդ առումով ընտրել արդյունավետ ուղի: Իսկ կրթության դերի բարձրացման գործում յուրաքանչյուր քաղաքացի պետք է սկսի հենց իրենից՝ քաջ գիտակցելով, որ երրորդ հազարամյակի սկիզբը պահանջում է գիտելիքահենք հասարակություն, իսկ նման հասարակության հիմքը դրվում է հենց սկզբնական կրթությունից: Եվ կրթությունն է հետագա բարեկեցիկ կյանք ունենալու հիմնական գործոնը:

3. Շվեյցարիայում Հայաստանի Հանրապետության համեմատ գործում են հարկային ցածր դրույքաչափեր: Հարկային բարեփոխումների արդյունքում 2020 թվականի հունվարի 1-ից չեղարկվեցին արտոնյալ հարկային ռեժիմները, ու ներդրվեցին հատուկ «անցումային» կանոններ, կանտոնային մակարդակում նվազեցվեց կորպորացիաների եկամտահարկի դրույքաչափը, ինչպես նաև տեղի ունեցավ արտոնությունների սահմանափակում: Վերջինս պետք է կիրառել նաև մեր հանրապետությունում, քանի որ Հայաստանի Հանրապետությունում գործում են բազմաթիվ հարկային արտոնություններ, որոնք

հաճախ, տրամադրվում են չհիմնավորված: Հարկային արտոնությունների նվազեցումը կլինայի պետական բյուջեի միջոցների որոշակի մասը:

4. Շվեյցարիան այն երկրների շարքում է դասվում, որոնք ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների համար նպաստավոր պայմաններ են ստեղծում՝ երկրում գործունեություն ծավալելու համար: Կարծում եմ, որ սա Հայաստանի Հանրապետության համար լավ օրինակ է, և պետք է «տեղափոխված» բիզնեսին նախնական հարկային արտոնություններ տրամադրել, ինչպես նաև ոչ ռեզիդենտների համար ավելի գրավիչ պայմաններ ստեղծել՝ դրանով իսկ նպաստելով ոչ ռեզիդենտների ներհոսքին ՀՀ:

ՉԵԽԻԱ

Դոնարա Գրիգորյան

Հոդվածը նպատակ ունի՝ ցույց տալու Չեխիայի տնտեսական ուղու հնարավոր տարրերի կիրառումը Հայաստանում:

Չեխիայի տնտեսական աճը պայմանավորված է դեպի Եվրամիություն, հատկապես Գերմանիա արտահանումներով, որը կազմում է արտահանման մեկ երրորդը, և օտարերկրյա ներդրումներով:

Չեխական շուկայի կախվածությունն իր եվրոպական առևտրային գործընկերներից (հիմնականում Գերմանիայից) նվազեցնելու համար կառավարությունը 2011-2012 թվականներին իրականացրել է բարեփոխումներ՝ դիվերսիֆիկացնելու երկրի արտահանման հնարավորությունները և արտահանման շուկայի կառուցվածքը, ինչպես նաև տնտեսական կառուցվածքը: Չեխիայի արդյունաբերության և առևտրի նախարարությունը և CzechInvest ներդրումային զարգացման գործակալությունը 2013 թ. հուլիսի 1-ին սկսել են «Ողջույնի փաթեթ» նախաձեռնությունը ներդրողների համար, որի նպատակն է

ներգաղթի ընթացակարգերը հնարավորինս դյուրացնել օտարերկրյա ներդրողների համար, ովքեր խնդրում են կացության և աշխատանքի թույլտվություն Չեխիայում:

Չեխիան խթաններ է տրամադրում ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական ձեռնարկություններին, որոնք ներդրումներ են կատարում արտադրական ոլորտում, տեխնոլոգիական, գիտահետազոտական և բիզնեսի աջակցության կենտրոններում: Ներդրումային խրախուսումների մասին 2019 թվականի փոփոխված օրենքն ավելի բարենպաստ կանոններ սահմանեց տեխնոլոգիական ներդրումների համար այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տիեզերագնացությունը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, կենսական գիտությունները, նանոտեխնոլոգիան և ավտոմոբիլային արդյունաբերության առաջադեմ հատվածները:

Ինովացիոն քաղաքականության իրականացումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության բարձր արդյունավետ, ճկուն և արձագանքող նորարարական տնտեսության ձևավորմանը, երկրի տնտեսական, գիտական և տեխնոլոգիական ներուժի մոբիլիզացմանը՝ երկրի տնտեսության անցումը դեպի զարգաց-

ման նորարարական ուղի: Պետական ինովացիոն քաղաքականության նպատակն է երկրում կառուցել գիտելիքի վրա հիմնված ժամանակակից տնտեսություն, որն ի վիճակի է հետագայում երկիրը հասցնելու տնտեսապես զարգացած երկրների թվին:

Այսինքն՝ ակնկալվում է ինովացիոն քաղաքականության շրջանակներում ստեղծել մասնավոր-պետական-հասարակական հատվածների սերտ փոխհամագործակցություն:

Մարքեթինգային առումով ստեղծել ապրանքանիշ՝ որպես նորարարության առաջատար երկրներից մեկը, պատմել Հայաստանի մասին, ինչպես անում է Չեխիան, որպես գիտական մեծ ներուժ, առաջադեմ արդյունաբերություն ունեցող և բազմաթիվ ոլորտներում հետազոտական երկիր, և այդ ոլորտներում կրթված և ճանաչված մասնագետների, մարդկանց ներգրավում: Շատ կարևոր է ստեղծել հարթակ կամ ընկերություն՝ մի քանի լեզվական տարբերակներով օտարերկրյա գիտնականներին տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու համար:

Չեխիան իր առողջապահական ոլորտում որդեգրել է պարտադիր բժշկական ապահովագրության ծրագիրը, որի արդյունքում կյանքի տևողությունը բարձրացել է 2.6 տարով, մինչև

78.7 տարի, որը ներառում է ստացիոնար և ամբուլատոր բուժօգնություն, դեղատոմսով դեղամիջոցների դուրսգրում, վերականգնողական բուժօգնություն, ատամնաբուժական որոշ ընթացակարգեր և սպա բուժում: Չեխիայի օրենսդրությունը սահմանում է, որ ապահովագրված անձինք իրավունք ունեն ստանալու ցանկացած բուժօգնություն, որը տրվում է՝ իրենց առողջական վիճակը պահպանելու կամ բարելավելու նպատակով:

ՉԻԼԻ

Շողեր Պողոսյան

Ներկայացնենք այն հիմնական մեխանիզմները, որոնք էական դեր են խաղացել Չիլիի տնտեսական բարեփոխումների համար:

-Առևտրի բացությունն ու միասնական սակագնային համակարգը

Չիլին հեռու է համաշխարհային սպառման կենտրոններից, ինչով բացատրվում է արտաքին առևտուրն ամբողջովին բացելու կարևորությունը: Երկիրը սկսեց ներմուծման սակագների նվազեցման լիակատար գործընթաց. 1979թ. ուժի մեջ մտավ յուրաքանչյուր ներմուծման համար միասնական 10% սակագինը: Սակագների նվազեցումը և միասնական համակարգին անցումը նպաստեցին գործընթացների թափանցիկությանը, որոնք էականորեն նպաստեցին չիլիական ընկերությունների միջազգային մրցունակության բարձրացմանը: Միասնական սակագները ուժեղացրին մրցակցությունը ներքին շուկայում, և գներն ազատականացվեցին:

-Ուժեղ մասնավոր հատվածի ստեղծում

Եթե բարեփոխումների առաջին գլխավոր

քայլը բաց տնտեսությունն ձևավորելն էր, ապա երկրորդը մասնավոր հատվածի վերակառուցումն էր, պետական որոշ ձեռնարկությունների մասնավորեցումը:

-Փորձի առումով հատկապես կարևորում ենք Չիլիի կուտակային կենսաթոշակային համակարգը, որն իրականում կենսաթոշակային խնայողությունների ներդրման միջոցով կարողացել է ոչ միայն լուծել սեփական տնտեսության խնդիրները, այլև դառնալ ներդրումների դոնոր:

Թեպետ ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգը Չիլիի համեմատ բավական նոր է (այն իր պայմանական մեկնարկը սկսեց 2008թ., իսկ պարտադիր կուտակային բաղադրիչն ուժի մեջ մտավ 2014թ. հունվարին), անհավասարության և հեռանկարի բացակայության զգացողությունը ևս առկա է մեր բնակչության շրջանում, ինչպես որ Չիլիում:

Բնակչության շրջանում հեռանկարի բացակայության զգացումը կանխելու նպատակով առաջարկում ենք մշակել համապատասխան սանդղակ հետևյալ տրամաբանությամբ. առաջիկա 10 տարվա վճարումներից հետո շահառուն հնարավորություն ունենա գոյացած միջոցների մի մասը (օրինակ՝ մոտ 20%-ը) ուղղելու

կրթական ոլորտ (տարիքային շեմն անփոփոխ մնալու դեպքում), իսկ հետագա 10 տարիների ընթացքում՝ հիպոթեքային վարկավորմանը և առողջապահությանը: Այն անձինք, որոնք կցանկանան կենսաթոշակի անցնել 65 տարեկանում (տարիքային շեմը փոփոխելով) և ունենառնվազն 30 տարվա աշխատանքային ստաժ, հնարավորություն ունենան աշխատել օրենքով սահմանված կարգով իրենց նախկին 5%-ից ազատվելով՝ թողնելով վերջին երկու տարվա պարտադիր կուտակային բաղադրիչի ամբողջ 10%-ի վճարումը պետությանը:

Զիլիի՝ արտահանման նոր ճյուղերի ձևավորման և զարգացման ուղու ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական նպատակաուղղված քաղաքականության շնորհիվ նախկինում ճանաչում չունեցող ճյուղերն ունակ են ներթափանցելու նոր շուկաներ և դիմակայելու համաշխարհային շուկայի առաջատարների մրցակցությանը: Առանձին ճյուղերում արտահանման աճը հանգեցրել է նոր աշխատատեղերի ստեղծման ու աղքատության մակարդակի նվազման, ինչը խիստ առաջնահերթ նշանակություն ունի նաև Հայաստանում, հատկապես գյուղական շրջաններում:

Զիլիի արտահանման փորձի ուսումնասիրության հիման վրա առաջարկում ենք հետևյալը.

- թիրախային ոլորտ սահմանելով՝ անհրաժեշտ է համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ, որոնց փորձի փոխանակմանն ու կապիտալի ներգրավմանն ուղղված որոշակի քայլեր պետք է արվեն:

- Պետական մակարդակով գործարար կապեր ձևավորել ֆերմերների և գիտահետազոտական հաստատությունների միջև, ինչի շնորհիվ ձեռք բերված գիտելիքներն ու փորձը արագորեն կփոխանցվեն ֆերմերներին և կկիրառվեն:

- Որպես ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ տեղեկացվածության մեծացման միջոց՝ անհրաժեշտ է խթանել ագրարային զբոսաշրջության զարգացումը, ինչը կնպաստի արտաքին շուկայում տեղական արտադրանքի ճանաչելիությանը և, հետևաբար, սպառման ընդլայնմանը:

- Հաշվի առնելով հայկական Մփյուռքը՝ օգտագործել այդ ներուժը՝ հայկական ապրանքների օտարերկրյա շուկաներ առաջմղման նպատակով: Տեղական շուկաների, ինչպես նաև տվյալ երկրներում առկա առանձնահատկությունների (օրենսդրական, ազգային, մշակու-

թային), սահմանված ստանդարտների վերաբերյալ մեր հայրենակիցների գիտելիքները կօգնեն, առավել քիչ ռեսուրսներ ծախսելով, ներթափանցել այդ շուկաները՝ միաժամանակ ամրապնդելով Հայաստան-Սփյուռք կապերը:

ՌՌՒՄԻՆԻԱ

Գրիգոր Մանուկյան

Ռումինիան տնտեսապես կայուն, դինամիկ զարգացող, խառը տնտեսությամբ, ԵՄ-ում իր ներկայությամբ, տնտեսական աճի համեմատաբար բարձր տեմպերով, ցածր գնաճով, ցածր պետական պարտքով, տոկոսադրույքներով և մարդկային զարգացման ինդեքսով երկիր է¹:

Հաշվի առնելով Ռումինիայի տնտեսական բարեփոխումների փորձը՝ առաջիկայում, ԵՄ ֆինանսական ռեսուրսները ներգրավելու, պետական ֆինանսավորում ստանալու նպատակով, Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է ձևավորել մրցակցության խորհուրդ, որը կհաստատի երկրի ռազմավարական նշանակության ծրագրերից բխող (մասնավորապես աջակցություն ցուցաբերվի ՓՄՁ-ներին, հատկապես թվայնացման միջոցով արտադրության ցիկլը պահպանելու համար, արդյունաբերության

¹ World Bank. (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021)

ու գյուղատնտեսության սերտ կապվածությամբ ծրագրեր) տնտեսապես հիմնավորված ծրագրերը:

Միջնաժամկետ հեռանկարում ՀՀ-ն կայուն տնտեսական աճի և բարելավված կենսամակարդակի ապահովման համար պետք է շարունակի կառուցվածքային բարեփոխումները և արդիականացնի պետական կառավարումը, ԵՄ-ի միջոցների ավելի ակտիվ կլանումը: Կայուն երկարաժամկետ աճը ենթադրում է, որ ՀՀ-ն պետք է ակտիվ միջոցներ ձեռնարկի՝ հարկեր հավաքելու համար, առաջընթաց գրանցի կառուցվածքային բարեփոխումների պլանավորման գործում՝ կենտրոնանալով մասնավոր ներդրումների խրախուսման վրա, ապահովելով ֆինանսական հատվածի շարունակական կայունությունը: Նման խնդիրների լուծումը պահանջում է ազգային ոլորտի զարգացման ռազմավարության մանրակրկիտ մշակում, որը պետք է հաշվի առնի մի շարք ասպեկտներ, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համար հատուկ վարկային գծի ստեղծում, արտահանման համար նախատեսված ապրանքների հարկային աջակցության և արտադրական կարողությունների տրամադրում, եկամտահարկի տարբերակում՝ կապված գործունեության ոլորտի հետ, տեղեկատվական և խորհրդատվա-

կան կենտրոնների ստեղծում, հայրենական և օտարերկրյա ձեռնարկատերերի միջև գործնական կապերի ընդլայնում:

Ժամանակն է ՀՀ-ում դադարացնել շրջանառության հարկի կիրառումը՝ հաշվի առնելով դրա հետ կապված ստվերայնությունը, դրան զուգահեռ կիրառել ԱԱՀ-ի դիֆերենցված դրույքաչափ՝ ըստ ոլորտների, օրինակ՝ 9% սահմանել գործունեության այնպիսի ոլորտների համար, ինչպիսիք են դեղերը, հյուրանոցները, 5%՝ շինանյութին: Այն կնպաստի հաշիվ ապրանքագրերով վաճառքների ավելի լայն տարածմանը, կանխիկ շրջանառության նվազմանը, ստվերային շրջանառության նվազման միջոցով հարկային ճեղքի կրճատմանը, սոցիալական լարվածության նվազեցմանը եկամտահարկի միասնական դրույքաչափի կիրառման դեպքում:

Աղքատության խնդիրները ՀՀ-ում մեղմելու նպատակով անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել ՓՄՁ-ներին, հատկապես թվայնացման միջոցով արտադրության ցիկլը պահպանելու համար, խթանել ՓՄՁ-ների արտադրանքը, հասանելի դարձնել ներդրումները ՓՄՁ-ներում: ՓՄՁ-ների ռազմավարությունը պետք է կապված լինի որոշակի միջանկյալ քայլերի, նախատեսվող ֆինանսական ռեսուրսների հետ, նշվեն

պատասխանատու հաստատություններն ու կազմակերպությունները, ոչ պետական մակարդակով ստեղծվեն կազմակերպություններ և հաստատություններ (օրինակ՝ վարկերի երաշխիքների հիմնադրամը՝ նպատակ ունենալով աջակցել ձեռնարկատերերին բիզնես ծրագրերի մշակման գործում և մասնակիորեն ստանձնել պահանջվող վարկերի մարման ռիսկը), որոնք ներգրավված են փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտում:

ՄԻՆԳԱՊՈՒՐ

Լիլիթ Սարգսյան

Անկախության 50-ամյա ժամանակահատվածում Մինգապուրն արձանագրեց տնտեսական աճի աննախադեպ ցուցանիշ: Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 500 դոլարից աճեց՝ դառնալով 55000 դոլար՝ գործելով տնտեսական հրաշք:

Ինչպե՞ս կարողացավ Մինգապուրը հասնել նման հաջողության:

Հանգամանորեն վերլուծելով Մինգապուրի պատմությունը՝ մենք առանձնացրել ենք այն հիմնասյուները, որոնց վրա Մինգապուրը կառուցեց իր տնտեսական հրաշքը:

Մինգապուրի տնտեսական հաջողությունը կառուցվել է մի շարք հիմնասյուների վրա: Հարկ է արձանագրել մի շատ կարևոր հանգամանք. այդ հիմնասյուներից գրեթե բոլորը կիրառվել են նաև Հայաստանում: Այդուհանդերձ, Մինգապուրում դրանք հաջողվել են, իսկ Հայաստանում՝ ոչ, ուստի պարզենք, թե ինչն է ընկաձ այս հաջողությունների և ձախողումների հիմքում:

Առաջին՝ կոռուպցիայի դեմ ակտիվ պայքար, որի ընթացքում կիրառվել է երկու գործիք. ան-

խտիր պատժվեցին կոռուպցիոն մեխանիզմներում մեղադրվող անձինք, և էականորեն բարձրացվեցին պատասխանատու պետական պաշտոնյաների աշխատավարձերը:

Նորանկախ Հայաստանում նույնպես եղան կոռուպցիայի դեմ պայքարի դրսևորումներ, սակայն դրանց անարդյունավետ մեխանիզմները չտվեցին ցանկալի արդյունք: Ի պատիվ ներկայիս կառավարության՝ պետք է նշել, որ այժմյան քաղաքականությունն առավել հարում է Մինգապուրի գործիքակազմին: Այնուամենայնիվ, հարկ է առանձնացնել հնարավոր երկու ծուղակ, որոնցից խուսափելով միայն՝ Մինգապուրի կառավարությունը կարողացավ հասնել հաջողության: Առաջինը ժողովրդավարության ծուղակն է: Պետական պաշտոնյաների աշխատավարձերի բարձրացումը, անկասկած, առաջացնելու է ժողովրդի դժգոհությունը: Այդուհանդերձ, ընկրկելու պարագայում մենք կարող ենք կորցնել պետական պաշտոններում լավագույն մասնագետներին ընդգրկելու հնարավորությունը: Երկրորդը մեղալի երկու կողմերի անհամադրելիության ծուղակն է: Տվյալ դեպքում մեղալի մի կողմում պետական պաշտոնյայի աշխատավարձի չափն է, մյուս կողմում՝ փորձառությունն ու մասնագիտական որակ-

ները: Մինգապուրին հաջողվեց գտնել դրանց լավագույն համադրությունը:

Երկրորդ՝ տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարությունների մշակում և ճշգրիտ իրագործում. տվյալ պարագայում շատ մեծ դեր ունեցան ռազմավարությունների հստակությունն ու ճիշտ թիրախների որոշումը, որոնցից բխեց նաև արդյունավետ մարտավարությունների մշակումը:

Նորանկախ Հայաստանում ևս մշակվում էին տնտեսական զարգացման ռազմավարություններ, սակայն լավագույն դեպքում դրանք թերակատարվում էին, իսկ վատագույն դեպքում՝ հակասում միմյանց, և առաջանում է երկու ծուղակ, որոնցից խուսափելով՝ Մինգապուրը գրանցեց հաջողություն: Առաջինն անորոշության ծուղակն է. ռազմավարությունները պետք է ունենան հստակորեն չափելի և ճիշտ ընտրված թիրախներ, որոնք հնարավորություն կտան ընտրելու ճիշտ մարտավարություն: Ներկայումս ՀՀ տնտեսության համար, թերևս, մեծ վտանգ կա այս ծուղակում հայտնվելու: Մասնավորապես ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2019 - 2024 թվականների (բաժին 5.11 - 5.13), փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020 - 2024 թվականների (բոլոր բաժինները) և այլ ռազմավարու-

թյուններում մեծամասամբ առկա չեն չափելի թիրախներ: Երկրորդը ջայլամի ծուղակն է. տվյալ պարագայում եթե մենք ճիշտ չենք գնահատում առկա վիճակը կամ թիրախավորում ենք մոլորության մեջ գցող իրավիճակ, ապա ձախողվելու ենք:

Նորանկախ Հայաստանում հաճախադեպ էր գործառույթների կրկնությունը, ուստի տվյալ գործառույթները լավագույն դեպքում թերակատարվում էին:

Երրորդ՝ աղքատության դեմ պայքարի յուրօրինակ մեխանիզմ: Տվյալ դեպքում աղքատության հաղթահարումն իրականացվում էր ոչ թե սոցիալական նպաստների տրամադրմամբ, այլ աղքատների համար պայմաններ ստեղծելով, որպեսզի նրանք ինքնուրույն դուրս գան աղքատության ճիրաններից: Ի տարբերություն նորանկախ Հայաստանի կառավարության՝ ներկայիս կառավարությունը ևս որդեգրել է աղքատության հաղթահարման սինգապուրյան մոտեցումը՝ զերծ մնալով նպաստների անհուսալի համակարգից:

Չորրորդ՝ ներդրումների ներգրավման և արտահանման խթանման ակտիվ քաղաքականության իրագործում. գործիքները բազմաթիվ էին՝ ներդրումային և արտահանման հարթակներ, մեկ պատուհանի ստեղծում, հարկային բարեփոխումներ, միջազգային ցուցահանդեսներին թիրա-

խային ոլորտների մասնակցության աջակցություն և այլն:

Ամփոփելով նշենք, որ Սինգապուրի տնտեսական հաջողությունը կերտած յոթ հիմնասյուները կարող են կիրառվել նոր Հայաստանում:

Սինգապուրի փորձից նշենք նաև մի քանի կիրառական գործիքներ, որոնք կարող են հաջողությամբ գործարկվել Հայաստանում.

1. տնտեսական ռազմավարությունների մշակում միայն խոր SWOT վերլուծության հիման վրա (ներկայիս ռազմավարությունները ներառում են շատ մակերեսային SWOT վերլուծություն),

2. ներդրումային արդյունավետ հարթակի գործարկում (investmentprojects.am-ի վերափոխման եղանակը նշված է վերլուծության մեջ՝ հիմնվելով Սինգապուրի փորձի վրա),

3. ներդրողների խնդիրներով զբաղվող մեկ պատուհանի ներդրում (թեպետ 2019 թ. դեկտեմբերին ստեղծվել է, այդուհանդերձ ներդրումային հարթակի սխալները չկրկնելու համար վերլուծության մեջ նշել ենք դրա ստեղծման արդյունավետ եղանակը սինգապուրյան օրինակով):

ՎՐԱՍՏԱՆ

Վահագն Խաչատուրյան

ԽՍՀՄ փլուզումից 13 տարի անց Վրաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունն» առաջ բերեց քաղաքական նոր իրավիճակ թե՛ երկրում, թե՛ տարածաշրջանում: Նոր կառավարության առաջնահերթությունը կոռուպցիայի դեմ պայքարն էր, այսպես կոչված «սոցիալական շուկայական տնտեսության» մերժումը և անցումն ավելի դասական ազատական մոդելի:

«Վարդերի հեղափոխությունից» հետո նոր իշխանությունները Սահակաշվիլու գլխավորությամբ ձեռնամուխ եղան պետական կյանքում արմատական փոփոխությունների, որոնցից առանցքայինը երկրում առկա լայնածավալ կոռուպցիայի հաղթահարումն էր: Սահակաշվիլին իրականացրեց կանխարգելիչ և պատժիչ միջոցառումներ: Հակակոռուպցիոն պայքարն ընթանում էր «Զրո հանդուրժողականություն կոռուպցիայի հանդեպ» կարգախոսի ներքո: Ամենակոռումպացված ոլորտը՝ ճանապարհային ոստիկանությունը լուծարվեց, ստեղծվեց պարեկային

ծառայություն: Ոստիկանական համակարգից հեռացվեցին 30 հազարից ավելի աշխատակիցներ: Այս գործողությունների արդյունքներով էր պայմանավորված հանրային տրամադրությունների փոփոխությունը ոստիկանության հանդեպ: Այսպես, 2016 թ. տվյալներով Վրաստանում ոստիկանությանը վստահում էր բնակչության 87 տոկոսը. սա Արևելյան Եվրոպայում ամենաբարձր ցուցանիշն էր: Հեղափոխությունից հետո շատ կարճ ժամկետներում սկսեցին արագորեն բարեփոխվել օրենքները, տեղեկատվական տեխնոլոգիաները գործադրելով՝ պետական կառավարման ապարատը դարձավ բաց և թափանցիկ: Վերացան վերահսկողական մի շարք կառույցներ: Կրճատվեց նախարարությունների և պետծառայողների թիվը, մնացած պետծառայողների աշխատավարձերն աճեցին 15 անգամ:

Լուրջ փոփոխություններ կատարվեցին արտաքին քաղաքականության ոլորտում. Վրաստանը հստակ որդեգրեց եվրոպական ուղղություն՝ նախատեսելով ԵՄ անդամակցության հեռանկարը: Անվտանգության ոլորտում հիմնական առանցքը դարձավ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների խորացումը՝ անդամակցության

հեռանկարով: Վրաստանը դադարեցրեց անդամակցությունն ԱՊՀ-ին:

«Վարդերի հեղափոխության» դերը շատ մեծ է Վրաստանի ժողովրդավարացման և արդիականացման, կոռուպցիայի հաղթահարման, արտաքին քաղաքականության հայեցակարգային փոփոխությունների առումով: Վրացական «թավշյա հեղափոխության» և հետագա արմատական բարեփոխումների մեջ առանցքային է հենց Միխեիլ Սահակաշվիլու դերը՝ Վրաստանում ժողովրդավարական հաստատությունների կայացման, արդյունավետ կառավարման, արևմտյան արժեհամակարգի և սկզբունքների ներդրման ու այլ կարևոր առումներով:

Մի շատ կարևոր արձանագրում ևս. «վարդերի հեղափոխությամբ» իշխանության եկան երիտասարդ, նոր սերնդի քաղաքական գործիչներ: Մեծ առումով վրացական բարեփոխումների դասերը կարելի է բաժանել երեք մեծ խմբի՝

առաջին դաս՝ ապաբյուրոկրատացում,
երկրորդ դաս՝ մասնավորեցում,
երրորդ դաս՝ ազատականացում:

Պետական ապարատի բարեփոխումների մասին խոսելիս առանձնահատուկ, որպես ամենահաջողված օրինակ պետք է անպատճառ նշել

Ներքին գործերի նախարարության արագ և արմատական փոփոխությունը: Մեկ օրում ՆԳՆ-ում աշխատանքից ազատվեցին 15000 աշխատակիցներ: Դրա հետ մեկտեղ ոստիկանների աշխատավարձը 20 դոլարից բարձրացավ տասն անգամ:

Կարևորագույն քայլերից մեկը, որին ձեռնամուխ եղավ իշխանությունը, զանգվածային մասնավորեցումն էր: «Մենք կվաճառենք ամեն ինչ, բացի խղճից» արտահայտությունը, որ միանգամից դարձավ թևավոր, պատկանում էր վրացական «տնտեսական հրաշքի» հեղինակ Կախա Բենդուկիձեին:

Վրաստանում հինգ տարվա ընթացքում նախաձեռնվեց ծավալուն և խորքային ավելի քան 70 բարեփոխում: Ամեն տարի, սկսած 2004 թվականից, Վրաստանը կրճատում էր հարկերի քանակը, իջեցնում դրույքաչափերը կամ պարզեցնում հարկային օրենսդրությունը: Հարկերի քանակը 2004-ին 21-ից իջավ 7-ի 2005-ին և 6-ի՝ 2007-ին: 2004 թ. անհատական եկամտային հարկը կազմում էր 20 %, սոցիալական հարկը՝ 33 %: 2008 թ. դրանք միավորվեցին, և միասնական եկամտային հարկը 25 % էր:

Վրաստանի փորձը ցույց տվեց, որ բարեփոխումները պետք չէ հետաձգել: Պետք չէ մտածել, որ քաղաքական ուժերի այլ հարաբերակցության կամ տնտեսության մեկ այլ իրավիճակի պայմաններում դրանք ավելի բարեհաջող կլինեն: Բացի դրանից, բարեփոխումները պետք է լինեն բավականաչափ արմատական:

ՖԻԼԻՊԻՆՆԵՐ

Աննա Մակարյան

Ֆիլիպինները, ի տարբերություն իր ասիական հարևանների, գնաց դեինդուստրիալիզացիայի ուղիով, որի արդյունքում երկիրը վերափոխվեց ծառայությունների վրա հիմնված տնտեսության՝ վերածվելով գործնական ծառայությունների արտապատվիրման համաշխարհային կենտրոնի՝ ԱՄՆ-ից ներգրավելով խոշոր վերագգային կորպորացիաների: 2010թթ. սկզբին Ֆիլիպիններն իրեն դիրքավորել էր որպես աշխարհում գործնական գործընթացների արտապատվիրման հիմնական կենտրոններից մեկը: 2019թ.-ին ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում ավելի էր մեծացել և կազմում էր 61%, իսկ ծառայությունների ոլորտում ներգրավված էր զբաղվածների 58%-ը: Եվ արդեն 2020թ.-ին Ֆիլիպինների այլ գործնական ծառայությունների արտահանումը կազմել էր 17.65 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը համարվում էր 2005-2020թթ. ամենաբարձր ցուցանիշը:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարել ստորև

բերվող **3 կիրառական առաջարկություններ՝** հիմք ընդունելով Ֆիլիպինների փորձը և ՀՀ տնտեսության յուրահատկությունները.

1. տնտեսական քաղաքականության առաջնահերթությունը պետք է լինի մշակող արդյունաբերություն/ՀՆԱ հարաբերակցությունը առնվազն 15%-ի վրա պահպանելը ծառայությունների ճյուղի աճին գուզընթաց:

2. Հիմք ընդունելով ծառայություններ/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում՝ առաջարկվում է ստեղծել աշխատանքային խումբ (տարբեր ոլորտների մասնագետներից և ՀՀ կառավարության ներկայացուցիչներից բաղկացած), ինչպես նաև կառավարությանն առընթեր ծառայությունների խորհուրդ՝ համակարգելու աշխատանքային խմբի աշխատանքները: Խումբը պատասխանատու կլինի ենթաոլորտային արտոնությունների և բարենպաստ պայմանների բացահայտման համար, որոնք կներգրավեն ներդրողների հետևյալ ոլորտները՝ հատկապես SS և S2S-ների հիման վրա ծառայություններ՝ գործնական գործընթացների արտապատվիրում (տվյալների վերլուծություն և այլն), ինչպես նաև բժշկական զբոսաշրջություն և այլն:

3. Ներկա փուլում այլ գործնական ծառայությունների ենթաոլորտներից առաջնայնություն

տալ տվյալների վերլուծություն և նպաստել այդ
ենթատիրոտ ներդրումների ներգրավմանը որո-
շակի քայլերի հաջորդականությամբ պայմանա-
վորված:

ՖԻՆԱՆՍԻԱ

Թաթուլ Մկրտչյան

Ի թիվս այլ գործոնների՝ Ֆինլանդիայի նորարարական տնտեսության կենտրոնական ոլորտը հետազոտական և կրթական համակարգն է: Հաջողության հասնելու համար Ֆինլանդիան երկար ճանապարհ է անցել՝ վերակառուցելով իր տնտեսական համակարգը և ավելի շատ միջոցներ ուղղելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ստեղծմանն ու գիտահետազոտական ոլորտի ֆինանսավորմանը:

Ֆինլանդիայի տնտեսության տեխնոլոգիական զարգացումը և առաջընթացն ապահովող առանցքային ուղղություններն են՝

- 1) կրթությունը,
- 2) R&D (Research & Development),
- 3) նորարարությունները,
- 4) կառավարման համակարգը:

Ֆինլանդիայի փորձից առանձնացնենք այն խնդիրները, որոնք կարող են կիրառական լինել Հայաստանի տնտեսության ժամանակակից պայմաններում.

– «գիտելիքի տնտեսություն» ձևավորելու ընդհանուր գաղափարի շուրջ հասարակության միավորում և, որպես հետևանք, պետական կառավարման մարմինների, բիզնեսի, հասարակական կազմակերպությունների, գիտահետազոտական ինստիտուտների, կրթական հաստատությունների ակտիվ փոխգործակցություն, համատեղ նախագծերի իրականացում,

– դեպի R&D և կրթական հաստատություններ ֆինանսավորման շարունակական աճ,

– կրթություն ստանալու հավասար հնարավորություններ բոլոր քաղաքացիների համար,

– յուրաքանչյուր քաղաքացու կյանքում կրթության շարունակական և անընդհատության ընկալման արմատավորում,

– հետազոտական և կրթական համակարգի կազմակերպությունների կլաստերի ձևավորում՝ դրանց համագործակցության պայմանների հնարավորինս ապահովմամբ,

– հիմնական կրթության տրամադրման մեջ անվճար դպրոցական պարագաների, դպրոցում սննդի, առողջապահական ծառայությունների, տեղափոխության (փոխադրամիջոցով ապահովում) ներառում,

– կրթության դերի արժևորում՝ ուսուցիչների հասարակական գնահատման բարձրացման

շեշտադրմամբ (որպես ուսուցիչ լավագույնի ընտրություն, անվճար կրթության տրամադրում, վերապատրաստումներ, ֆինանսական պայմանների բարելավում),

– Ֆինլանդիայի կրթության ոլորտի պատասխանատու մարմնի հետ համագործակցության հաստատում՝ փոխանակման ծրագրերի իրականացման նպատակով,

– ֆիննական կառավարման մոդելների, ինստիտուցիոնալ կառուցվածքների և լիազորությունների, համակարգում համագործակցության ընդլայնման մեխանիզմների ներդրման և դրանց արդյունավետության ուսումնասիրություն:

ՖՐԱՆՍԻԱ

Հովհաննես Ասատրյան

Ֆրանսիայի տնտեսության, մասնավորապես ագրարային ոլորտում կատարված ուսումնասիրությունները հիմք են տալիս ներկայացնելու հետևյալ առաջարկությունները, որոնք կիրառելի կլինեն ՀՀ նույն ոլորտում առկա տարաբնույթ խնդիրների համակողմանի լուծման նպատակով:

1. Հետպատերազմյան Ֆրանսիայի տնտեսությունը որդեգրեց դիրիժիզմի քաղաքականությունը, որը պետության կողմից տնտեսության կառավարման գործում ակտիվ միջամտության քաղաքականություն է: Այս մոդելը թույլ տվեց երկրին ոչ միայն վերականգնել պատերազմից տուժած տնտեսությունը, այլև տպավորիչ հաջողությունների հասնել տնտեսության տարբեր ոլորտներում: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսական ներկա վիճակը՝ կարծում ենք՝ վերոնշյալ քաղաքականության ներդրումը մեր երկրում նույնպես կբերի դրական տեղաշարժերի:

2. Ֆրանսիան պետական մակարդակով հատուկ ուշադրություն է դարձնում երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերի զարգացմանը: Դրա վառ օրինակը 2015 թվականին Ֆրանսիայի գյուղատնտեսության նախարարության պատվերով մշակված ռազմավարական ծրագիրն է, որը կոչվում է «Գյուղատնտեսություն-նորարարություն 2025»: Վերջինս ընդգրկում է հայեցակարգ է, որը վերաբերում է ագրարային ոլորտի զարգացմանը՝ անդրադառնալով այնպիսի արդիական հարցերի, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունները, հողի բերրիության խնդիրը, նանոտեխնոլոգիաների կիրառումը գյուղատնտեսության մեջ և այլն: Ռազմավարական ծրագրի մշակման համար կատարվել են ծավալուն հետազոտություններ, կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ գյուղօլորտի մասնագետների, գիտաշխատողների, բիզնես ոլորտի ներկայացուցիչների, տեղական կառավարման մարմինների, ֆերմերների հետ և այլն:

Առաջարկում ենք Ֆրանսիայի ռազմավարական ծրագրից վերցնել հետևյալ կետերը.

- կանխատեսել կլիմայի հնարավոր փոփոխությունները և հարմարվել դրան.

- զարգացնել և խթանել ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարումը,

- գյուղատնտեսության համար՝ ստեղծել ագրոօդերնութաբանական պորտալ՝ կանխատեսելով կլիմայի հնարավոր փոփոխությունները,

- ոլորտի համար մշակել հիվանդությունների և վնասատուների արագ ախտորոշման գործիքակազմ,

- նպաստել ՀՀ սպիտակուցային ինքնաբավության ապահովմանը,

- հզորացնել ուսուցման, գյուղաջակցության և խորհրդատվության համակարգերն՝ անհրաժեշտ ունակություններով և գիտելիքներով,

- բացահայտել գյուղատնտեսության ֆինանսավորման նոր աղբյուրներ,

- տիրապետել նոր կենսատեխնոլոգիաների,

- կազմակերպել հետազոտություններ գյուղատնտեսության մեջ թվային տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ:

3. Ֆրանսիայում լայն տարածում ունի արտադրության վարման խմբային ձևը: Դրանց մեջ ամենակարևոր տեղը զբաղեցնում են կոոպերատիվները: Կոոպերատիվները գործում են արտադրության բոլոր ոլորտներում: Գինեգործության մեջ դրանք ապահովում են արտադրու-

թյան մինչև 50 %-ը, բանջարեղենի պահածոների 30%-ը, մսի առևտրի 25%-ը, կաթնամթերքի ավելի քան 40%-ը: Գինեգործական կոոպերատիվները Ֆրանսիայի ակտիվության խմբի անդամներն են: Ֆրանսիայի արտադրության բնագավառում ունեն երկարատև պատմություն: Խաղողագործության և գինեգործության ճյուղերը ՀՀ-ի և Ֆրանսիայի տնտեսական ընդհանրություններից մեկն են: ՀՀ-ի խաղողագործության և գինեգործության ոլորտներում առկա խնդիրները հաշվի առնելով՝ առաջարկում ենք կիրառել Ֆրանսիայի փորձը, մասնավորապես ՀՀ-ում գինեգործական կոոպերատիվների մոդելի կիրառումը: Այս մոդելի դեպքում կոոպերատիվի անդամ ֆերմերներն իրենց խաղողը մատակարարում են կոոպերատիվին, որն էլ ֆերմերների անունից արտադրում է գինի կամ գինեհումք և վաճառում: Կոոպերատիվի և նրա անդամների միջև խաղողի մթերման պայմանագիր չի կնքվում: Ե՛վ խաղողը, և՛ դրանից ստացվող արտադրանքը ֆերմերների սեփականությունն են մինչև վաճառվելը: Այս առաջարկության կիրառումը կբերի մի շարք խնդիրների լուծման:

3. ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

	<i>Հեղինակի անունը և ազգանունը</i>	<i>Հեղինակի զբաղեցրած պաշտոնը, գիտական աստիճանը և կոչումը</i>
1.	Վլադիմիր Հարությունյան	ՏԻ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2.	Ռոբերտ Սարինյան	ՏԻ գլխավոր գիտաշխատող, բաժնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
3.	Քրիստինե Բաղդասարյան	ՏԻ գիտ. քարտուղար, առաջատար գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4.	Մերի Մանուչարյան	ՏԻ առաջատար գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, բաժնի վարիչ
5.	Գրիգոր Մանուկյան	ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
6.	Թաթուլ Մկրտչյան	ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
7.	Գայանե Թովմայան	ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու
8.	Հայկ Մարկոսյան	ՏԻ առաջատար գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
9.	Լիլիթ Սարգսյան	ՏԻ փոխտնօրեն, տնտեսագիտության թեկնածու
10.	Սվետլանա Դավլաթյան	ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, բաժնի վարիչ
11.	Վահագն Խաչատրյան	ԲՏԱՆ նախարար, տնտեսագիտության թեկնածու

12.	Գևորգ Հարությունյան	ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
13.	Եվգենյա Հակոբյան	ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
14.	Արմինե Զախարյան	ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
15.	Ռազմիկ Իսահակյան	ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
16.	Շողեր Պողոսյան	ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
17.	Գոհար Ոսկանյան	ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
18.	Ստեփան Պապիկյան	ՏԻ ավագ գիտաշխատող, տեխն. գիտ. թեկնածու
19.	Աննա Մակարյան	ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
20.	Մարիամ Պողոսյան	ՏԻ կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
21.	Հովհաննես Ասատրյան	ՏԻ կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
22.	Դոնարա Գրիգորյան	ՏԻ կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
23.	Տաթևիկ Շահինյան	ՏԻ կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
24.	Մերի Մուրադյան	ՏԻ կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու

ՏԻ - ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԻ
ԵՎ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(Համառոտ ուրվագիծ)**

Հրատարակության խմբագիր՝	Ա. Հովակիմյան
Շարվածքը՝	Մ. Բաբայանի
Էջադրումն ու ձևավորումը՝	Մ. Համբարձումյանի

Չափսը՝ 70×100 ^{1/16} 4.25 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 100 օրինակ: